




241
n-20



5023
206 1174

Մ Ա Ն Կ Ա Ն Յ



2

Չ Մ Ե Ռ Ի Ե Ն

Ի Բ Ի Կ Ո Ւ Ն Ն Ե Բ

2012-W2

UNITED STATES
DEPARTMENT OF THE TREASURY
INTERNAL SECURITY

8

UNITED STATES
DEPARTMENT OF THE TREASURY
INTERNAL SECURITY

Handwritten signature or name

5023

ՉՄԵՌՈՒԼՆ


ԻՐԻԿՈՒՆՆԵՐ

ԿԱՄ

ԱՅԼԵՒԱՅԼ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ


ՀԱՏՈՐ Ա .



ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԻՆԱԶԱՐ

1859



5000-212

2022

Հ. Բ. Բ. Բ. Բ. Բ.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

1999

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԻՆՏԵՆՍԻՎ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ



Հայաստանի
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

578-2007

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԷՒՐՈՊ ԱՅՒ գեղերուն մէկուն մէջ Մարկեղոս անունով բարեպաշտ մարդ մը կար, որ բաւական ունեւոր ըլլալով՝ աւելի ընտրեր էր քառքէ հեռու իր հանգստութեամբը ապրիլ, քան թէ քառքի շփոթութիւններուն մէջ հարըստութիւնն ու փառքը պատիւը աւելցրնէլ :

Հինգ զաւակ ունէր աս Մարկեղոսը, և բոլոր սրտանց կը հոգար որ բարեպաշտ, մարդավար ու դիտուն տղաք ըլլան . ա՛նոր համար առաքինի ու խմաստուն քահանայ մը առաւ բովը որ իր տղոցը վարժապետութիւն ընէ :

Աէց եօթը տարի աս գովելի քահանան հոն կենալէն ետքը, ան սեղի եպիսկոպոսը բովի մեծ գեղին աւագերէց ըրաւ զինքը . ուստի պէտք եղաւ որ ելլէ Մարկեղոսին անէն : Մարկեղոսին տղաքը շատ տըրամեցան աս բանիս վրայ, և հրաման առին


իրենց հօրմէն որ գոնէ ամմէն շաբաթ եր-
թան իրենց արդիւնաւոր վարժապետը
տեսնան :

Ան ամառը ասանկ անցուցին . իսկ ձը-
մեռը ինչ պիտի ընենք ըսելով երբոր տրտա-
մուծեան մէջ էին տղաքը , Մարկեղոսը
խօսք դրաւ քահանային հետ որ ան ձմեռը
ամմէն հինգշաբթի իրիկուն իր ընտանիքով
աւագերէցին տունը երթայ , ան ալ ի-
րենց բարոյական ու հոգևոր բաներ պատ-
մէ . որով անոնց սրտին մէջ ցանաժ առա-
քինուծեան հունտերը ծլին ծաղկին ու
պտղաբեր ըլլան : Եւ իրաւցրնէ քիչ ատե-
նէն Մարկեղոսին տղաքը իրենց վարպե-
տին տըւած դասերը աղէկ սորվելով ,
փառք ու պարծանք եղան իրենց ծնողա-
քը , և անոնց յոյսը պարապ չիհանեցին :

Մենք ալ հաւատարմուծեամբ ժողվե-
ցինք իրեն խօսքերը . և ահա կուտանք մեր
տղոցը ձեռքը . Աստուած տայ որ իրենք
ալ նոյնպէս օգուտ քաղեն ու բարեպաշ-
տուծեամբ և իմաստուծեամբ զարգար-
ւին :




ԵՂԻԱ



Չ Մ Ն Ռ Ի Ե Ն

ԻՐԻԿՈՒՆՆԵՐ



ԵՌԶԻ ԻՐԻԿՈՒՆ

Աստուծոյ վախը , և մարդկային
նկատմունքը :

ՆԵՄՅԷՍՏԱՆԻ քաղաքներէն մէկուն մէջ բարեպաշտ դարբին մը կար . ասիկայ մէկ հատիկ զաւակ մը ունէր Աղիա անունով , խեղքը միտքը ան էր որ աղէկ կրթէ աս իր զաւակը : Միշտ սուրբ զրբին աս գեղեցիկ խօսքը կըսէր իրեն . « Աստուծոյ վախը իմաստութեան սկիզբն է » , և կըհասկըցընէր՝ թէ մէկը երջանիկ ըլլալ կուզէնէ , Աստուծոյ պատուիրանքները պիտի սրահէ : Աղիան աղէկ հասկըցաւ

իր հօրը խրատներուն միտքը , ու կը ջանար որ ձեռքէն եկածին չափ կատարէ . « Աստուած զիս կըտեսնէ , կըսէր ինքնիրեն . ես չեմ կըրնար ամենևին զինքը խաբել , կամ իր աչքին դիմացէն փախչիլ . իր նախախնամութիւնը միշտ իմ վրաս է . իմ ամմէն գործքս կըդիտէ . թէպէտ և մարդիկ իմ ըրածներս չիտեսնան , բայց Աստուած որ կըտեսնէ՝ ան ինձի բաւական է . ուրեմն ես նայիմ որ ամենևին գէշ բան մը չընեմ , մեղք մը չիգործեմ իր առջևը » : Ասանկ բաներ մտածելով Աղիան օր օրւան վրայ սկսաւ առաքինի ըլլալ . անմեղութիւնը երեսին վրայ կըփայլէր , և իր ծնողացը խօսքէն ամենևին գուրս չէր ելար : Ամմէն օր անպակաս իր աղօթքը կընէր , պատարագը կըտեսնէր , քրիստոնէական վարդապետութիւնը լսելէն չէր պակսէր , և կը նայէր որ իր օրերը կատարեալ քրիստոնէի մը պէս անցնէ :

Արբեմն կիրակի օրերը իր ծնողքէն հրաման կառնէր կերթար ուրիշ տը-

դոց հետ խաղալու, բայց շատ չան-
ցաւ՝ ան բանէն ալ ետ կեցաւ, վասն
զի մէկ քանի անհամ ու գէշ խօսքեր
լսեց անոնցմէ. ուստի վախցաւ որ չը-
լայ թէ ինքն ալ անոնց հետ շատ տես-
նըւելով՝ անանկ խօսքերու վարժի: Ար-
բոր քիչ մը տարիքը առաւ, սկսաւ հօ-
րը խանութը երթալ, անոր արհեստը
սորվել:

Դարբինին դրացի էր կառք շինող
վարպետ մարդ մը, որ աղէկ վաստակ
կրնէր, բայց բարեպաշտութենէ հե-
ռու կը քալէր: Դամ խիստ քիչ կերթար,
կիրակի օրերը խել մը ատեն բանի գործ-
քի հետ ըլլալէն ետքը, կելէր կեր-
թար ուտելու խմելու զուարճանալու:
Աս մարդը շատ զաւկի տէր էր, և առ-
ջինեկին անունը՝ Աիկոլ էր, կրակոտ
բնութեամբ ու կրոուասէր տղայ մը:
Հայրը աս իր տղուն վրայ հոգ չէր ը-
նէր, շատ շատ՝ թէ որ անկարգ բան մը
ընելը տեսնէր նէ՝ այսչափ կըսէր իրեն
չեխելով, « Թէ որ մէկը հիմա աս ը-
րածդ տեսնելու ըլլայ նէ, ինչ պիտի

ընես » : Աս էր ահա բոլոր իրեն տը-
ղուն տըւած կրթութիւնը : Տղան աս
խրատը պահեց . բայց ինչ օգուտ որ
խրատին հիմը խախուտ էր . հիմը մարդ-
կային նկատմունք էր , որ մարդս կեղ-
ծաւորութեան մէջ կը ձգէ . որով մարդ
քիչ մը ատեն ուրիշները կը խաբէ , բայց
օր մը չէնէ օր մը խաբէութիւնը դուրս
կելլէ , խաղք կը լլայ : Ասանկ աս 'Աիկոլը
խելացի ճարպիկ տղայ մըն էր . բայց իր
ընկերներն ալ քիչ ատենէն հասկըցան
իրեն կեղծաւորութիւնն ու խարդա-
խութիւնը : Ասան զի երբեմն մէկտեղ
խաղալու ատեն՝ մէկուն մէկ բանը կը-
դողնար , մէկալին մէկալ բանը . և ա-
նանկ աչքաբացութեամբ ու շուտու-
թեամբ կընէր աս բաներն որ մէկը
չէր կըրնար զինքը յանկարծ բռնել ,
թէպէտև ամմէնքն ալ վրան կը կաս-
կածէին . անոր համար սկսան կամաց
կամաց իրմէ հեռու կենալ :

Ազիան ու 'Աիկոլը երկուքն ալ
նոյն տարիքը ըլլալով , երբոր իրենց
հօրերնուն արհեստը սորվեցան՝ ու-

զեցին մէկ ճամբորդութիւն մը ընել,
դէպ 'ի Ֆրանսա երթալ: Առջինին զի
զած հարստութիւնը՝ առաքինութիւն
ու բարեպաշտութիւն էր. ուստի ճամ
բայ ելլալէն առաջ ընդհանրական խոս
տովանանք մը եղաւ ու հաղորդւեցաւ,
ինդրելով որ Աստուած իրեն բարի յա
ջողութիւն տայ: Արբոր իր հօրը մնաս
բարովի զնայ նէ, հայրը աչւրները լե
ցուած՝ դարձաւ ըսաւ իրեն. « Աւրե
մըն դու զիս քիչ մը ատենէն պիտի թո
ղուս, որդեակ իմ. դու զիտես թէ ես
քեզ ինչպէս կըսիրեմ, և քու երթալուդ
վրայ սրչափ տրտմած եմ. բայց չեմ ու
զեր դէմ կենալ. վասն զի կուզեմ ալ
քու ճամբորդութիւն ընելդ, որ խեղ
սորվիս ու մարդ ըլլաս. մինակ մէկ եր
կու բան ըսեմ քեզի որ անկըճիդ օղ ըլ
լայ. « Ա յախցիր Աստուծմէ, և իր կա
մացը դէմ բան մը չընես: Այսէ որ բա
րեպաշտութիւնն ու խոհեմութիւնը
ձեռքէ չիթողուս: Աւրիշի բանին աչք
չիտնկես: Տըւած խօսքդ նայէ որ պա
հես: Աւրիշի վրայ չար չիխօսիս, և

քեզի շարիք ընողին՝ նայէ որ բարիք ընես : Հետու կեցիր ան ընկերութիւն ներէն որ կրնան քու բարեպաշտութեանդ կամ անմեղութեանդ վնաս մը բերել : Չըլլայ թէ որ և իցէ մարդու հետ բարեկամանաս . հասցա նայէ որ դիմացինդ աղէկ հասկընաս : Աստուծոյ երկիւղը վահան մը ըլլայ քեզի որ անով ամմէն փորձանքներէ խալըսիս : Չըլլայ թէ մարդկային նկատման համար քու խղճմտանքիդ դէմ բան ընես , վասրն զի մարդկանց հաճոյ ըլլալու մըտքով միայն աշխատիս նէ՝ բանդ դէշ կերթայ : Աեղութեան մէջ ինչալու ըլլաս նէ՝ սիրտդ հանդիստ բռնէ , և խղճմտանքդ մաքուր . գիտցիր որ Աստուած երբեմն զմեզ փորձելու համար նեղութիւն կրխրկէ մեզի , բայց ոչ երբէք զմեզ ձեռքէն կըթողու » :

Աղիային մայրն ալ մէկ քանի հարկաւոր բաներ զուրցելէն ետքը , կըրկին և կրկին ապրսպրեց իրեն որ սուրբ Աստուածածնայ ջերմեռանդ ըլլայ , ու զինքը իրեն բարեխօս բռնէ , ուստի

Հանեց տըւաւ իրեն յիշելիքի պէս Աստուածածնայ պատկերք մը՝ որ իր վարան պահէ :

Ճամբայ ելաւ Աղիան, ու հասաւ Պէլճիա . բիշ ատենէն ետքն ալ՝ Աիկոլը ելաւ ճամբայ, ու հասաւ Գաղղիայի հարաւային կողմերը : Արկուքն ալ հետերնին չափաւոր ստակ առերէին . բայց իրենց կրթութիւնն ու վարքը մէկմէկէ շատ տարբեր էին : Աղիան ամենեւին չէր պակսէր իր աղօթքէն, ու կիրակի՝ տօն օրերը պատարազ տեսնելէն : Իր ճամբորդութեանը մէջ մինակ երթալու ատեն՝ միշտ ցած ձայնով կրսէր ան աղօթքները որ բերնուց զիտէր . և ճամբուն վրայ ուղղափառի ժամ մը տեսնելուն պէս ներս կը մտնէր՝ զինքը Աստուծոյ կը յանձնէր :

Իսկ Աիկոլը անոր ներհակ աս ամէն բանէն ետ կեցած էր, աղօթքի տեղ՝ կամ անպարկեշտ երգեր կերդէր, կամ փուճումնուճ բաներու վրայ մէկուն մէկալին հետ խօսակցութիւն կընէր : Վեց ամսըւան մէջ քանի քանի

վարպետներ փոխեց, և ամենեին տեղ
մը հանդարտ չէր կրրնար կենալ իր
խեռ. բնութեանը համար : Ինքզինքը
խաղի ու խմելու տրուաւ . քանի որ վար-
պետին աչքին առջևն էր՝ կաշխատէր .
իսկ մինակ մնացած ատենը ամմէն բան
կըթողուր . աս պատճառաւ մէկ գործք
մը ղլուխ չէր կրրնար հանել : Աղիան
իր ձեռքէն եկածին չափ միշտ կաշխա-
տէր . ասով օրէ օր առաջ գնաց . իր
արհեստին մէջ վարպետ եղաւ , ու ամ
մէնքը իր վրայ բարի համարմունք ու-
նեցան . իր աղէկութեանն ու բարե-
պաշտութեան անունը շորս գին տա-
րածւեցաւ . և բոլոր վարպետները կը
ցաւէին՝ երբոր իրենց քովէն կելէր որ
աւելի մեծ վարպետներու քով մտնայ :
Ասանկով Աղիան իրեք տարւան մէջ
Պէլճիայէն ելաւ ինչվան Քորոնիա գը-
նաց , անկէց ալ ճամբայ ելաւ որ Պէր-
լին երթայ :

() ր մը տօսրակը կոնակը զարկած,
գաւազանը ձեռքը, շունը էտեէն, ան-
տառի մը մէջէն կանցնէր . կտոր մը կե-

ցաւ որ յոգնու թիւնը առնէ : Իր շունը
որ միշտ հետն էր, ասդիս անդին վազ
վրուտելու ատենը մէյմնալ յանկարծ ըս-
կրսաւ կատաղաբար հաջել ու ոտւրնե-
րով գետինը փորել : Աղիան սկսաւ շու-
նը իրեն կանչել, բայց անիկայ մտիկ
չէր ընէր : Ատք ելաւ գնաց շանը քով.
տեսաւ որ դոհարներով զարդարած
ոսկի ժամացոյց մը կեցեր է գետինը : Ա-
ղիան մէկէն առաւ սկսաւ զննել ու ը-
սել ինքնիրեն . « Անտարակոյս ասի-
կայ ճամբորդի մը պիտի ըլլայ . առջի
քաղաքը հասնելուս սէս տանիմ դա-
տաւորին տամ որ տիրոջը ձեռքը հաս-
ցրնէ » : Աս մտքով սկսաւ քալել դէսլ 'ի
քաղաքը երթալ : Բայց շունը նորէն
յանկարծ կանկ առաւ ու սկսաւ առ-
ջինէն աւելի հաջել : Աղիան մէկէն ետ
դարձաւ . շունն ալ ան միջոցին վազեց
ցաթկեց փոսի մը վրայէն անցաւ , ու
թուփի մը վրայ ելաւ . կարծես թէ իր
տէրն ալ իր էտեէն կրկանչէր : Այ-
մընալ ինչ կրնայիս . մէկ հազւած
սրգւած մարդ մը արիւնլըւայ գետինը

փռւած հողեվարքի մէջ կեցեր է: Յայտնի բան է որ խեղճ մարդը աւաղակներու ձեռք ընկած է եղեր, որ զինքը հանւրցուցեր ու վերաւորեր՝ անտառին մէջ տեղ մը ձգեր են որ մարդ չի մանայ: Աղիային երեսին գոյնը պատկտրեցաւ, ու վախէն շունչը սկսաւ բռնորւիլ: Հիմայ ինչ ընէ խեղճ տղան, կենայ օգնէ՞ ան խեղճին, բայց ինչպէս կրնայ ընել. յանկարծ վրան մարդ հասնի նէ՞ կրնան բռնել զինքը, ըսելով թէ դուն սպաններ ես: Մէկը չի կայ որ իրեն անմեղութեանը վկայ ըլլայ. ետքը ինչ գէշ բան պիտի ըլլայ երբոր զինքը բանտ դնեն ու մարդասպանի պէս դատապարտեն: Աս բաները մտածելով սկսաւ դողալ, բայց մէկէն ուրիշ բան մը միտքը եկաւ. «Իմ հայրս ինծի կըսէր, թէ Աստուծոյ մէջ ՚ի զատ՝ բանէ մը մի վախնար. մարդկանց դատաստանը Աստուծոյ դատաստանին առջև բան մը չէ. ուրեմն պէտք է որ օգնեմ աս խեղճ ողորմելի մարդուն, ալ թէ ինծի ինչ կրը-

հայ ըլլալ՝ ան փոյթս չէ, բաւական է
 որ բրաժս բարեգործութիւն մըն է » :
 Աս բաւ, ու մէկէն տօպրակը կոնը-
 կէն վար առաւ, զնաց վերաւորած
 մարդուն քովը, վերցուց զգեստը, տե-
 սաւ որ խեղճ մարդը մեծ վէրք մը ա-
 ուեր է վզին վրայ, և արիւնը ջրի պէս
 կը վազէ անկէց : Մէկէն վեր վերցուց
 մարդուն գլուխը՝ ծառի մը կը թընցուց,
 ետքը առաւ զլխարկը, վազեց զնաց
 ջուր բերելու որ վէրքը լուանայ : Աս որ
 բրաւ նէ, խեղճ մարդուն աչքները մէյ-
 մը բացւեցան, տեսաւ իր աղատիչը,
 քիչ մը խնտաց, կարծես թէ իրեն
 շնորհակալ ըլլալու մտքով, բայց ամե-
 նեին խօսք մը չիկրցաւ հանել բերնէն :
 Քացաւ Աղիան իրեն տօպրակը, հա-
 նեց մէջէն իր վզնոցն ու անով կապեց
 վէրքը : Ա ըւաց մարդուն արիւնոտ ե-
 րեսը, ու անզգալի կերպով մը բոլոր
 մարմինը զովացուց : Քայց շունը նո-
 րէն սկսաւ հաջել. չորս հոգի, որ
 ան միջոցին անտառին մէկալ կողմէն
 կանցնէին, շանը ձայնը խելով եկան

578-2007

Հայաստանի
 ԿՈՒՆ
 ՊԵՏԱԿԱՆ

Հոն որ իմանան թէ ինչ կայ : Ասոնք
մօտիկ քաղքէն ելեր՝ ուրիշ գեղ մը կեր
թային : Աս զարհուրելի տեսարանը
տեսան չիտեսան՝ վազեցին կատաղու
թեամբ բարերար Աղիային վրայ . « Ա՛յ
անգգամ աւազակ , ըսին , դուն սպան
նեցիր ուրեմն մեր քաղաքացին հա՞ գը
տար ահա քու պատիժդ . ալ աս ան
գամ քեզի խալըսում չիկայ : Ա՞՞ զիտէ
ուրիշ անգամ ալ ո՞րչափ ասանկ ան
զգամութիւններ ըրած ես » : Ա՛էկէն
չորս դին առին , ձեռքը ոտքը կապեցին
որ չիփախչի :

Աղիան ասոնց ըրած անգթու
թեանը վրայ ամենեւին չիխոռվեցաւ .
հանդարտ կերպով մը իրենց զուրցեց
թէ « Աս աւազակ չեմ , հասկա ճամ
բէն անցնելու ատենս շանը հաջելուն
համար կանկ առի նայեցայ թէ ինչ
կայ . ահա ժամացոյց մըն ալ գտայ աս
տեղանքս . ուստի ես գող չեմ . թէ
որ ես անգութ մարդ մը ըլլայի նէ՛
ճամբաս չէի թողուր ու չէի գար աս
խեղճ ողորմելիին օգնելու , հասկա կը

Թողուի որ մեռնի, ինչ կուզէ ըլլայ :

— Ատոնք խօսք են, ըսաւ ան չորսէն մէկը . ինքզինքդ արդարացընել կուզես . բայց չես կրնար : Հիմակու հիմա բանդ աղէկ է . մենք զքեզ կրտանինք դատաւորին , հոն կիմացւի թէ քու սուտերդ ինչպէս դուրս պիտի ելեն : Անկէ վերջը քու մարդասպան ըլլալուդ մէկ յայտնի ապացոյցն ալ աս է որ ձեռքներդ ու լաթերդ բոլոր աբիւնոտեր են . ուստի աս խօսքերով ըզքեզ չես կրնար արդարացընել » :

Աղիան տեսաւ որ իր խօսքը մտիկ ընող չիկայ, ձայնը վար քաշեց . բայց ամենեւին չայլայլեցաւ . վասն զի բոլոր յոյսը Աստուծոյ վրայ դրեր էր , զիտնալով որ Աստուած իր ծառաները ձեռքէն չիթողուր :

Ատքը ճամբորդները ծառի ճիւղեր կտրեցին՝ ճաղի պէս բան մը շինեցին, դրին մէջը վիրաւորուած մարդը ու ճամբայ ելան . Աղիան ալ ձեռքները կապած՝ էտենէն կերթար : Քաղքին դուռը հասածնուն պէս մէկէն զացին քա-

դաքառեալին հասկըցուցին բանը, Աղիան շղթաներով կապած առին բանադրին. վասն զի վրան դտնըւած ժամացոյցէն, և վրան գլուխը արիւնոտըլլալէն անտարակոյս մտքերնին դրին որ յանցաւորը ինքն է: Իմացան ալ թէ ով է վիրաւորած մարդը. որ քաղքին երևելի վաճառականներէն մէկն է եղեր. իր ընտանիքը երբոր լսեցին աս դիպուածը՝ մեծ սուղի մէջ մտան. մէկէն բժիշկ՝ վիրաբուժ կանչեցին, նայեցան որ ամենևին ըորնտնարու պէս չէ:

Տես թէ ինչ եկաւ խեղճ Աղիային գլխուն, ան ալ անանկ տեղ մը որ ոչ ճանչւոր մը ունի և ոչ բարեկամ. միայն իր մէկ հատիկ հաւատարիմ՝ ընկերը իր շնիկն էր՝ որ քովէն չէր բաժնուէր: Քանի կրմտած էր գլխուն եկածը, այնչափ մեծ կերևնար իրեն վիճակին խեղճութիւնը. միայն աս մէկ բանը կը մխիթարէր զինքը որ դոնէ քիչ մը բարիք կըրցաւ ընել վիրաւորւած մարդուն:

« Կարգիկ կրօնայ ըլլալ որ զիս դա-
տապարտեն, կըսէր. բայց Աստուած
զիտէ թէ ես յանցաւոր չեմ, ան ինծի
բաւական է: Վաճառողքս հիմա պիտի լը-
սեն զլիսուս եկածը, բայց ոչ երբէք պի-
տի հաւատան թէ ես աս յանցանքին
տէրը ըլլամ. ոչ երբէք պիտի հաւա-
տան թէ իրենց որդին աւազակ եղեր
է, ան ալ՝ ճամբու վրայ աւազակ » :

Արկրորդ օրը դատաւորները եկան
բանար որ քննեն աս մարդասպանու-
թիւնը: Ազիան պատմեց իրենց հան-
դարտութեամբ ու պատուով տեղն 'ի
տեղը ամմէն բան. ցցուց իր վարպետ-
ներուն իրեն աղէկութեանը ու հա-
ւատարմութեանը համար տըւած թըղ-
թերը:

Դատաւորները շատ կերպով տե-
սակ տեսակ հարցմունքներ ըրին, որ
կամ ծուռ՝ կամ իր զուրցածներուն
դէմ բան մը առնեն բերնէն. բայց Ա-
զիան իր զուրցածներուն վրայ ամուր
կեցաւ ու ամենեւին խօսքը չիփոխեց:
Արբոր դատաւորները իրենց բանը լը-

մընցուցին, Աղիան աղաչեց որ ըսեն իւրեն, թէ արդեօք բժիշկները յոյս կուտան վիրաւորւած մարդուն ապրելուն: Գատաւորները պատասխան տրւին թէ բժիշկները դեռ յոյսերնին չեն կրտրած . բայց հիւանդին հարցընել չըլլար աս բանիս վրայ ինչվան տասը օրի չափ: « Աս ինչ մեծ աւետիս էր որ տրւիք ինձի, ըսաւ Աղիան . թէ որ ատմարդը ապրելու ըլլայ, անշուշտ անդիս կըճանչնայ, և դուք ան ատենը կիմանաք, պարոններ թէ ես աւազակ չեմ »:

Գատաւորները մեծ համարմունք առին Աղիային վրան, տեսնելով իր հանդարտ ու անխռով խօսակցութիւնը, և իրենցմէ մէկը դարձաւ ըսաւ ընկերներուն. « Ա՛յ տեսեր է մէկ մարդասպան մը, որ իր սպաննած մարդուն վրայ տեղեկութիւն ուզէ, իսկ ասիկայ անոր ներհակ՝ անանկ զուարթ ու անխռով կեցեր է որ անմեղ ըլլալուն մարդ չիկրրնար տարակուսիլ »:

Բայց Աղիան դեռ բանտին մէջ թռ

ղուցին . անկողինը չոր խոտ էր , կե-
րակուրը սև հաց ու ջուր : Ան ատեն
խեղճ տղան միտքը բերաւ իր հօրը վեր-
ջի տրւած խրատը , թէ մարդուս ինչ
պէս հարկաւոր է բարեպաշտութիւնը .
վասն զի մինակ ան էր որ ուժ կուտար ի-
րեն անանկ սաստիկ նեղութիւններուն
համբերելու : Հարցուց թէ բանաին
քահանային հետ կրնայ խօսիլ . խօ-
սեցաւ հետը ու խոստովանեցաւ ա-
նանկ ջերմեռանդութեամբ ու ցաւով ,
որ քահանան ալ զարմացաւ վրան .
խոստացաւ միջնորդ ըլլալու իրեն հա-
մար դատաւորներուն , որ իրեն քիչ մը
թուլութիւն տան . և ըսածը կատարեց .
վասն զի շղթաները քակեցին , առջի
տեղէն ալ հանեցին՝ ուրիշ սենեակ մը
դրին :

Աս միջոցիս Աղիային բռնուիլը ու
բանտ դրուիլը բոլոր քաղաքը տա-
րածւեցաւ . և ինչպէս որ սովորու-
թիւն է , ամմէնքը մէյմէկ կերպով կը-
մեծցրնէին յանցանքը : Ար անունը և իր
գաղղիացի ըլլալը բոլոր քաղքին մէջ

խմացւեցաւ . և որչափ որ օտարական
տղաք կային ան քաղաքին մէջը իր ար-
հեստէն , ամմէնքն ալ մըտուրնին գրին
որ երթան տեսնան իրենց դարբին ըն-
կերն ու թուքումուրով խաղք ընեն :

Հետևեալ կիրակի օրը շատը դացին
որ ճանչնան աս յանցաւորը : Ասոնց
մէջը գտնուեցաւ 'Աիկոլն ալ' Աղիային
հին բարեկամն ու քաղաքացին : Ասի-
կայ բոլոր Վաղղիա ու Օւլիցցերիի
երկիրը պարտելէն ետքը եկեր հասեր
էր ան քաղաքը , ուր որ Աղիան բանա-
դրեր էին : Աղիան բանտին բակը կե-
ցած ըլլալով , տեսաւ որ իր բարեկա-
մը եկեղեցին կըմտնէր . մէկէն ճանչ-
ցաւ զինքը , և շատ ուրախութիւն ցը-
ցուց ' զինքը տեսնելուն համար :

« Ար յուսամ որ , ըսաւ , հրամանքդ
եա չես կենար ասանկ հարկաւոր ա-
տեն ինձի օգնելու և վկայութիւն տա-
լու իմ պղտիկութեան ատենէս ունե-
ցած անմեղութեանս » : 'Աիկոլը մէկէն
արհամարհելով , ու հպարտ կերպով մը
պատասխան տրւաւ . « Աս քեզի հա-

մար վկայ ըլլամ, ես զքեզ չեմ ճանչնար, ես քեզ կենացս մէջ տեսած չեմ. մարդասպան մարդու հետ ես ինչ բան ունիմ» : Աս անարգանքը, աս հպարտ խօսքերը՝ Աղիային սրտին մէյմէկ վէրք եղան, ու սկսաւ լալ : « Ղուքու պատիժդ աղէկ գտեր ես » կանչեց՝ Աիկոլը երեսին, ու թողուց ելաւ բանտէն :

Տասը օր անցաւ, Աղիան իր թշուառութենէն չիխալըսեցաւ. միայն Աստուծոյ նախախնամութեանը ապաւիններ էր որ իր անմեղութիւնը դուրս հանէ :

Մէյմըն ալ մէկ առաւօտ մը աղօթք ընելու ատենը՝ բանտապետը եկաւ ըսաւ իրեն որ պիտի երթայ վիրաւորւած մարդուն հետ տեսնուի. վասն զի մեռնելու վտանգէն խալըսեր է անիկայ : Աղիան վեր ցաթկեց ուրախութեամբ, ելաւ զնաց բանտապետին ետեւէն. վեց զինուոր բանտին դրանը առջին պատրաստ կեցեր էին, որ առին բերին զինքը ինչվան հիւանդին տունը. նոյն միջոցին հոն հասան դատաւորներ նալ :

Քիչ մը սպասելէն ետքը տարին զինքը
հիւանդին խուցը, ասոր քալը հիւան-
դը տեսածին պէս սկսաւ ուրախու-
թենէն կանչել, «Տէր Աստուած, ահա
իմ ազատիչս, ո՛վ ազնիւ տղայ, եկ՛ո՛ եկ՛ո՛
իմ գիրկս, դուն ես ինձի աս կեանքս տը-
ւողը, թէ որ Աստուած զքեզ ինձի
օգնութիւն խրկած չըլար, ես հիմա
մեռած էի» . աս ըսելով վիզը պըրտե-
ցաւ սկսաւ ըսլ :

Հիմա մտածեցէք Աղիային ուրա-
խութիւնը, որ իր անմեղութիւնը դուրս
ելաւ, մտածեցէք մէյմըն ալ հոն դառող
մարդիկներուն սիրտը թէ ի՞նչ եղաւ,
երբոր տեսան ու ըսեցին աս դորձողու-
թիւնները : Ամէնքը մէկէն եկան Ա-
ղիային քովը, սկսան իրեն ուրախակից
ըլլալ, ու մեծ համարմունք առին վը-
րան : Աոլոր վաճառականին ընտանիքը
իրմէ թողութիւն խնդրեցին որ փուճ
տեղը այսչափ ատեն բանտը կեցաւ,
և խոստացան իրեն որ աս պատճառով
իրեն որչափ փնաս եղաւ նէ՛ ձեռքեր-
նէն եկածին չափ վճարեն :

Բայց առաքինի տղան սլառասխան տը-
լաւ հեզութեամբ . « Աս արդէն իմ
վարձքս առի՝ որ իմացան ամմէնքը թէ
ես անմեղ եմ . և ասանկ տուն տեղ ու-
նեցող հայր մը մահուանէ խալըսելս
իմ աչքիս դիմացը բոլոր աշխրբքիս ոս-
կիէն ու փառքէն աւելի կածէ » :

Աս վեհանձն ու առաքինի խօսքերը
երբոր մէկ աշխատաւոր տղու մը բեր-
նէն լսեցին՝ ամմէնքը զարմացան , ու
Աղիային անունը ինչվան երկինք բարձ-
րացաւ :

Ասկէ ետքը յանձն առաւ Աղիան
որ կենայ վաճառականին սունը , և ին-
քը սկսաւ հոգալ զհիւանդը . մէկ ամ-
սէն ետքը մեծ ուրախութիւն ունեցաւ
որ հիւանդը բոլորովին առողջացաւ :

Վրան շատ ատեն շանցաւ , Աս-
տուծոյ թոյլտուութեամբը բուն յան-
ցաւորը բռնըւեցաւ : Ասիկայ դատար-
կապորտ մարդուն մէկն էր , որ ուրիշ
անգամ ալ բռնըւեր էր , բայց վարպե-
տութեամբ բանտէն փախեր էր . ուս-
տի լեռնէ լեռ՝ անտառէ անտառ սը-

տրտելով ամմէն շարագործութիւն կը
գործէ եղեր: Աս թշուառականը գիշեր
մը գեղի մը տիրոջ տունը մտեր է. գը
րանը բացելէն ու շանը հաջելէն
կարթըննայ տանտէրը, կառնէ լեցուն
ատրճանակը՝ կըսըխմէ ոտքին՝ կըսիրա
ւորէ, որ ալ չիկրնար փախչիլ: Ասանկ
ձեռք իյնալէն ու բանտ դրելէն ետ
քը, քննեցին իմացան որ ըրած շարու
թիւններուն չափ չիկայ. շատ մարդիկ
ճանչցան զինքը, որոնք որ հանւըցուցեր
էր, և էն վերջը ըրածներուն պատիժը
գտաւ:

Վաճառականը Աղիային ընծայ
տըւաւ գտած ոսկի ժամացոյցը. ե
կամուտ մըն ալ կապեց իրեն որ անով
բոլոր կեանքին մէջ իր հացը գտնայ:
«Աուզես նէ աս քաղաքը կեցիր, ըսաւ
իրեն. գրէ կանչէ ընտանիքդ ալ որ գան
հոս, ու հոս ըրէ դարբնութիւնդ.
ես ալ ինչ բանի մէջ որ պէտք ըլլայ՝
կօզնեմ քեզի»:

Աղիան շնորհակալ եղաւ անոր բա
րի սրտին, և հասկըցուց՝ թէ իր միտքը

ան է որ հայրենիքը դառնայ, ու ծը-
նողացը ծերութեան ատենը անոնց
միտթարանքն ըլլայ : Յայց ճամբայ
ելելէն առաջ ցաւալի դիպուած մըն
ալ հանդիպեցաւ :

Ան անզգամ 'Աիկոյը, որ անգութ
կերպով չուզեց ճանչնալ իր խեղճ ան-
մեղ բարեկամը, աս միջոցիս կառք շի-
նողի մը քով կաշխատէր՝ առանց փո-
խելու իր կեղծաւոր վարքը : Հաւատք
օրէնք մէկդի թողուցած, մինակ ան
կրնայէր որ դրսըւանց մարդկանց աչ-
քին աղէկ երեւնայ, ներսը ինչ որ
կուզէ նէ ըլլայ :

Մէկքանի խաղսիրող արհեստակից
տղոց հետ բարեկամ ըլլալով՝ ամ-
մէն կիրակի օր կերթար քաղքէն դուրս
տեղ մը՝ ատենը կանցընէր, և բոլոր շաբ-
թըւան մէջ վաստըկածը կըխաղար, ու
գրեթէ ամմէն անգամ բոլորն ալ կոր-
սընցուցած տուն կըդառնար : Օր մը
ասոր բախտը բանեցաւ որ յիսուն Ֆիօ-
րին վաստըկեցաւ . ասով նորէն խաղա-
լու աւելի սիրտ առաւ . բայց աս յաջո-

դու թիւնը երկայն չիզնայ : Ահէկէն է
տեի կիրակի օրը բոլոր վաստրկածը
կորսընցընելէն ետքը , ժամացոյցն ալ
ձեռքէն ելաւ , աս բանիս ճարը գտնե-
լու համար , գնաց խել մը ըստակ փոխ
առաւ , որ կարենայ նորէն ձեռք ձգել
ժամացոյցը , բայց ան առածն ալ կոր-
սընցուց ու տրտմութեամբ տունը գար-
ձաւ : Հիմա ի՞նչ ընէ որ աս փորձան-
քէն խալըսի , ու պարտքը վճարէ . տես
գտած ճարը : Իր վարպետին տանը
քով պարտիզպան մը կրքնակէր որ
շաբթուն մեծ մասը հեռու պարտե-
զի մը մէջ կաշխատէր : Աիկոյը աս
բանս գիտնալով , մէկ իրիկուն մը պա-
տէն անցաւ , մտաւ պարտիզպանին
տունը , հոն սնտուկ մը բացաւ՝ մէջը
հինգ հարիւր Ֆիօրինի չափ ստակ դը-
տաւ , ասոնք վերցընելն ու դուրս փախ-
չիլը մէկ ըրաւ : Բայց հազիւ թէ պա-
տէն վեր պիտի ելլէր , մէյմնալ տեսնաս
ճամբուն դուռը բացւեցաւ ու պարտիզ-
պանը իր տղոցմովը մտաւ ներս , տե-
սաւ որ պատին վրայ շարժմունք մը կայ ,

մէկէն վրան վազեց ու գողին ոտքը բռնեց : Աիկոլը որչափ որ ուժ ունէր կրթօթօվէր որ փախչի պարտիզպանին ձեռքէն , բայց չիկրցաւ . վասն զի շուտով վրայ հասան կնիկն ու տղաքը , քաշեցին նորէն պարտէզը ինջեցուցին գողը :

Ասոնց կանչվում էին դրացիքն ալ վազեցին եկան , և օդնութիւն հասնող ներուն էն առջինը 'Աիկոլին վարպետն էր : Խեղճ արհեստաւորը ամօթէն ու զարմանալէն ինչ ընելիքը չէր գիտէր : 'Աիկոլը մէկէն տիրոջը ոտքն ինկաւ , սկսաւ լալով աղաչել պաղատիլ որ խընայէ իրեն , ու չիթողու որ դատաւորի ձեռք լցնայ . կրխոստանար որ նոյն ատենը մէկէն գողցած ըստակները ետ տայ , և խաղը պատճառ եղաւ իմ աս չարիքը գործելուս կըսէր . բայց ինչ օգուտ : Արդում պատառ կըլլար թէ ասկէ վերջը վարքս կըփոխեմ , մէյմըն ալ ասանկ բան չեմ ըներ : Ո՞վ մտիկ կընէ :

Աս միջոցիս դատաւորին մարդիկը

Հասան, բռնեցին տարին բանտ, և իր վճիռը մէկէն կտրուեցաւ, վասն զի ամենեւին չէր կրրնար ուրանալ իր վրայ եղած ամբաստանութիւնը, յանցանքը դործելու ատեն՝ ու ստակը ձեռքը բռնըւելուն համար:

Տես թէ աս տղուն վերջը ինչ եղաւ, որ վարքը այնչափ տարբեր էր Աղիային վարքէն: Անիկայ եղբայրսիրութեան համար ամմէն նախատինք յանձրն առաւ, ինչվան մեռնիլ ալ՝ թէ որ պէտք ըլլար նէ: Ասկ ասիկայ որ միայն մարդկային նկատմունքը իրեն կանոն բռներ էր, և անով կը ծածկէր իր յանցանքները մարդկանց առջև, ու զԱստուած և առաքինութիւնը ծաղր կրնէր, ետքը ետքը ինչպէս պատժուեցաւ: Աղիան երբոր բանտին մէջն էր՝ հանդարտ կեցած կը սպասէր որ Աստուած իր արդարութիւնը ցըցընէ. Աիկոլը անոր ներհակ՝ բողոքովին յուսահատած, ժամէ ժամ կը սպասէր իր դատաւարտութեանը վճիռը լսելու: Արկու ամիսէն ետքը որոշեցաւ որ

տասը տարի կենայ բանտին մէջ . ահա
աս կերպով տուժեց իր խաղի սէրը :

Աղիան ճամբայ ելելէն առաջ լսեց
իր քաղաքացիին բանտ մտնելը , գու-
թը շարժեցաւ , և ուզեց չարութեանը
տեղ բարիք ընել . ելաւ գնաց բանտ , դը-
տաւ զինքը , խօսեցաւ հետը , ու ձեռքէն
եկածը ըրաւ իրեն : Աս վեհանձնու-
թիւնը տեսնելով , աւելի մեծ համար-
մունք առին վրան ուրիշները . ‘Աիկոյն
ալ ապշեցաւ մնաց , ու լալով բռնեց
Աղիային ձեռքը , աս խօսքերս ըսաւ
իրեն . ‘ Արտեսնաս իմ խեղճութիւնս ,
ինչպէս իմին կեղծաւորութեանս պա-
տիժը գտայ : ‘ Դուն Աստուծոյ վախը
միշտ աչքիդ առջին ունենալով , նայե-
ցար որ իր կամքին դէմ բան մը չը-
նես . իսկ ես մինակ աս նայեցայ որ
մարդկանց առջևը դէշ չերևնամ . անոր
համար հիմա կը քաղեմ իմ աշխատա-
նացս դառն պատուղները : ‘ Դու հի-
մա կերթաս հայրենիքդ կը դառնաս ,
քու ծնողքդ պիտի ուրախացընես . ես
հոս բանտի մէջ տրտմութեամբ փձա-

ցընեմ պիտի իմ կտրճու թեանս օրերը :
Միայն աս կաղաչեմ քեզի Աղիա , չըլ-
լայ որ իմ խեղճ ծեր հօրս պատմես իմ
զուլիս եկածը , չըլլայ թէ ըրած յան-
ցանքս իմանայ ու ցաւի » : Աս խօսքե-
րըս զուրցելու ատեն սիրտը ելաւ ու
սկսաւ լալ :

Աղիան յիսուն ֆիօրին տըլաւ իրեն ,
զրկեց պաղտըլեցաւ հետը . սիրտ տը-
լաւ որ սիրով համբերէ՝ իր յան-
ցանքին պատիժը վճարելու համար :
Խօսք տըլաւ ալ որ անոր ծնողացը ա-
մենեին բան մը չիզուրցէ , և այսպէս
լալով մէկմէկէ բաժնըլեցան :

Մէկ քանի օրէն ետքը Աղիան հա-
սաւ Գաղղիա , գտաւ իր ծնողքը ողջ
առողջ և ուրախ . հոն սկսաւ իր օրե-
րը երջանկաբար անցընել : Իր խանու-
թին դրանը վրայ փորել տըլաւ ան խօս-
քերն որ իրեն այնչափ երջանկու թեան
պատճառ եղան , այսինքն թէ

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ ԱՍՏՈՒԾՈՅ
ՎԱՐՆ Է :

Տղաքը սիրով մտիկ ըրին աս երկայն պատմութիւնը , և մտքերնէն դովելով Աղիային բռնած ճամբան , առաջագրեցին որ իրեն նմանին . և ուրախութեամբ տուն դարձան :



ՆՐԿՐՈՐԳ ԻՐԻԿՈՒՆ

Հնազանդութիւն :

ՄՆԵՐԿԵՂՈՍԻՆ տղաքը անանկ զը-
ւարձացեր էին իրենց վարպետին պատ-
մած պատմութենէն , որ օրէ օր կը-
սպասէին՝ թէ երբ պիտի դայ Հինգ-
շաբթի օրն որ նորէն իրենց վարպետին
սունը երթան պատմութիւն լսելու :
Վերջասպէս հասաւ ան փափաքելի օ-
րը . քահանան ալ սկսաւ ասանկ ը-
սել իրենց .

« Սիրելիք, ամմէն Հինգշաբթի ձե-
զի մէյմէկ խեղք սորվելու բաներ պատ-
մելովս՝ միտքս աս է որ զձեզ աղէկ ըւ-
լալու յորդորեմ , աւետարանին ըւ-
քանչեղի խրատները դործքով ինչպէս
կատարել կըլլայ՝ ձեզի հասկըցընեմ,
և սրտերնուդ մէջ առաքինութեան փա-
փաքը վառեմ : Ես վախճանիս համար

կուզեմ զձեզ զուարճացրնելով կրթել,
ուստի առջի պատմութիւնը Աստու-
ծոյ վախին ու մարդկային նկատմանը
վրայ էր, այսօր կուզեմ խօսիլ հնազան-
դութեան վրայ :

Ճերմակ ծովին մէջ Հոռոզոս անու-
նով կղզի մը կայ, որ մէջի գեղեցիկ
պտուղներուն՝ աղնիւ մեղրին ու ձիւնի
պէս ձերմակ մեղրամովին համար խիստ
անուանի է : Աս կղզիին մէջի գլխա-
ւոր քաղաքը աղէկ նաւահանդիստ մը
ունի . աս նաւահանգստին բերանը
երկու ժայռ կայ, անոնց վրայ ալ եր-
կու աշտարակ շինած է : Աս աշտա-
րակներուն տեղը Հոռոզոսի հին բնա-
կիչները Քրիստոսէն 700 տարի ա-
ռաջ Ապողոն կուռքին արձանը կեցու-
ցեր էին՝ թափծու պղնձէ՝ եօթանա-
սուն ոտք բարձրութեամբ : Անանկ մեծ
էր աս արձանը՝ որ մէկ մատը մարդ մը
հազիւ կրնար գրկել, և էն խոշոր նա-
ւերը համարձակ կրմտնէին կելէին եր-
կու ոտքին մէջտեղէն : Արձանին ներ-
սի դին սանդուխ մը կար, անկէ ամ

Մէն իրիկուն վերկելէին՝ արձանին ձախ
ձեռքի բռնած կանթեղը կրվառէին՝ որ
նաւերը լոյս տեսնան: Գլխուն վրայ ոս-
կեզօժ ճառագայթ մը կար, որ արևը
վրան զարկած ատենը՝ զարմանալի կեր-
պով կրփալփրէր, իսկ աջ ձեռքը ա-
ղեղ ու նետ բռնած էր: Աս ահագին
արձանը, որ աշխրբքիս եօթը հրաշա-
լեաց մէկը կրսեպւէր, մէկ գետնաշար-
ժէ մը կործանեցաւ՝ յիսունը վեց տա-
րիէն ետքը: Ա եսպասիանոս կայսրը
Քրիստոսի 69 թուականին նորէն տե-
ղը դնել տրւաւ. բայց 667ին երբոր
արաբացիք Հոռոսը առին, աս ար-
ձանն ալ կործանեցին. և Մուսալիէ
ամիրապետը հրէի մը ծախսեց պղինձը,
որ հարիւր ուղտի բեռ եղաւ:

Գիտէք որ 1099ին խաչակիրները
Արուսաղէմ քաղաքը առին. ան ատե-
նը նէապօլսեցի վաճառականները,
սրբոյն Յովհաննու երուսաղեմացոյ
ասպետութեան կարգը հաստատեցին,
որ վերջերը Մալթայի ասպետ ըսե-
ցան: Արբոր նորէն Արուսաղէմ արա-

բացւոց ձեռքը անցաւ, ասոնք հրաման
առին ամիրապետէն ու վանքի պէս տեղ
մը շինեցին Արուսաղէմին մէջ, որ իրենք
հոն նստին, ու Աւրոպայէն Արուսա-
ղէմ եկող ուխտաւորները հոն ինջնա-
լու տեղ դանան : Աս ազատութեանը
փոխարէն՝ իրենք ալ ամմէն տարի սուրբ
մը կուտային արաբացւոց : Իրեք ուխտ
ունէին ասոնք . կուսութիւն , աղքա-
տութիւն ու հասարակասիրութիւն .
ետքը չորրորդ ուխտ մըն ալ աւելցուցին
որ Արուսաղէմ գացող քրիստոնեայ
ուխտաւորներուն պաշտպանութիւն ը-
նեն աւագակներուն ձեռքէն :

Արբոր 1187ին Սալադին խալի-
ֆան Արուսաղէմը առաւ, սրբոյն Յով-
հաննու ասպետները փախան Աքեա
քաղաքը . անկէց ալ 1291ին նորէն
փախան գացին Ախպրոս կղզին : Ատ-
քը 1310ին առին նաև Հոողոսը ,
և հոն ամուր բերդեր շինեցին՝ բար-
բարոսաց ձեռքէն խալսելու համար :

Աս ասպետները խիստ շատուր էին .
վասն զի Աւրոպայի մեծամեծներուն

զաւկրնները աս կարգը մանելը իրենց
մեծ փառք կրսեպէին :

Մեպտեմբեր ամսուն մէջ Հինգշաբ-
թի օր մը օդը խիստ գեղեցիկ ըլա-
լուն՝ բոլոր Հոռոգոսին քաղաքացիքը
տներնուն դիմացը ելեր նստեր էին :
Մէյմնալ տեսնաս խել մը ժողովուրդ
թափեցան ասպետներուն վանքին դի-
մացը ուրախութեամբ, սրտալով կանչ
վըռտելով, անանկ որ ասոնց աղաղա-
կէն բոլոր քաղաքը սկսաւ թնտալ :

Ան բազմութեան մէջը մէկ կարծիճ
երիտասարդ ասպետ մը աղւոր ձիու
մը վրայ հեծած, ոտքէն ինչվան գլուխը
զէնք ու շրահ, թուրը նիզակը արիւ-
նտա, գէպի վանքը կերթար . էտեէն
խել մը որսի շներ, ժողովուրդն ալ ա-
նոնց էտեէն ահագին կոկորդիլոս մը
բռնած կրբերէին :

Աս սոսկալի գազանիս գլուխը կար-
ծես թէ երկրթէ էր, վրան հաստ կա-
շիի պէս թեփով (փուլերով) ծածկած .
բերանը խոր անդունդ կրնմանէր,
չորս գին խոշոր խոշոր սուր ակռանե-

րով . աչընները անանկ կըվառվըռէին
որ տեսնողը ողջ կըկարծէր : Առնակը
ուռած ու ծալք ծալք եղած էր . որով
կիմացուէր թէ ինչպէս դիւրաւ կը
շարժի ու կըդարձմըրձկի եղեր : Արշ
մը ունէր որ զարկածը մէկէն դետի-
նը կըփռէր :

Իսկ ժողովուրդը անդադար ասպե-
տը ցուցընելով կըպոռային ճամբուն
վրայ . « Մսիկայ է կըսէին՝ ան կտրիճը,
ան քաջ ու սրտոտ ասպետը որ ըսպան-
նեց կոկորդիլոսը : Մն կոկորդիլոսն որ
այսչափ ատենէ՛ ՚ի վեր կըջարդէր կը-
մեռցընէր մեր ոչխարներն ու հովիւնե-
րը, և այնչափ կտրիճներ չիկըցան ա-
նոր հետ գլուխ ելել . աս ասպետիս
պահեր է եղեր Մտուած աս մեծ
փառքը . ասոր ձեռքովը խաղաղու-
թիւն պիտի գանէ եղեր մեր երկիրը .
Մտուած երկայն օրեր տայ մեր աս-
պետին , որ մեզի ասանկ մեծ բարիք ը-
րաւ » : Մսանկով երբոր հասան վան-
քին դրանն առջևը , ասպետը ձիէն վար
իջաւ , մտաւ ներս , ժողովուրդն ալ է-

աւէն : Մեծաւորը վերէն տեսնելով ժողովուրդը , ասպետը , կոկորդիլոսը , բանը իմացաւ . մէկէն նշան տրւաւ զան զակով , ասպետները դուրս ելան իրենց խուցերէն , ու ժողվրեցան մեծաւորին խուցը : Անքը ելաւ նստաւ իր աթոռը , ասպետները չորս դին կարգաւ շարւած կեցան . ժողովուրդն ալ առին կըարիձ ասպետը ներս բերին : Անիկայ կամաց կամաց քալելով առաջ եկաւ . ազնուականութիւնն ու քաջութիւնը երեսէն կ'իմացուէր , աչւրներէն կըտեսնուէր սրտին կտրձութիւնն ու ուրախութիւնը : Ատնարհ կերպով մը զընաց ծռեցաւ բարեւ տրւաւ մեծաւորին և իր ընկերներուն , ու ըսաւ .

« Փառք տանք Աստուծոյ , հարք իմ և եղբարք , որ իմ աշխատանքս փուճը չիհանեց , և իմ ձեռւրներս զօրացուց , ուժ տրւաւ ինձի որ կարենամ սպաննել ատ զազանը , որ այսչափ ատեն կաւրէր կապականէր բոլոր կողին , ու կըվախցընէր բոլոր բնակիչները . ահա հոս հիմա ձեր առջին փրուած կե-

ցեր է ան կոկորդիլոսը : Ասկէ վերջը
չիլրնար ասիկայ ուխտաւորներուն ար-
գելք ըլլալ , որ երթան տեսնան լեռան
վրայի Աստուածածնայ հրաշագործ
պատկերքը . հովիւները համարձակ
կրնան ասկէց ետքը իրենց ոչխարնե-
րը տանիլ ծովեզերքը արծեցընել . ծը-
նողք՝ ալ չեն վախնար թէ իրենց տղա-
քը կրկորսըին » :

Մեծաւորը ծուռ ծուռ նայեցաւ
վրան ու դարձաւ ըսաւ . « Արդեակ ,
իրաւ որ մեծ կտրճութիւն ըրիր որ խա-
լըսեցիր բոլոր կղզիս ատ սոսկալի դա-
զանին ձեռքէն . քաջութիւնը մեզի պէս
ասպետներուն մեծ պատիւ է , և աս
ըրած գործքովդ դուն ալ յայտնի երև-
ցուցիր քու քաջութիւնդ : Տայց դուն
չէ թէ միայն աշխարհական զինուոր
ես , հասա նաև Քրիստոսի զինուոր
ես , ատ խաչն որ հագուստիդ ու զէն-
քերուդ վրայ դրած է , քեզմէ ուրիշ
բաներ ալ կը պահանջէ : Աւրեմն ըսէ
տեսնամ , Քրիստոսի զինուորին առջի
պարտքն ո՞րն է » :

Աս միջոցիս բոլոր կեցողներուն երեսին գոյնը նետեց : Դարձաւ սլատասխան տրւաւ ասպետը ազնուական կերպով մը . « Քրիստոսի զինուորին առջի պարտքը հնազանդութիւնն է :

— Բայց դուն որդեակ, ոտքի տակ առիր ատ հնազանդութիւնը, ու չիպահեցիր՝ կոկորդիլոսին հետ չիկրուելու հրամանը . ան դազանը այնչափ փնաս տալ չէր կրնար, որչափ որ կուտայ ատ հպարտութիւնն որ խաբեր է գրեզ :

— Տէր իմ, տեղն 'ի տեղը չիլսած՝ կաղաչեմ որ զիս չիգատապարտես : Աս իրաւ է որ գրսըւանց յանցաւոր կերևնամ . բայց յուսամ որ ինչ սլատածս ոտով աս բանիս ձեռք զարնելս իմանաք նէ՝ անով զիս կարդարացընէք : Ամ մէնքդ գիտէք թէ մեր ընկերներէն հինգ հոգի սիրտ ըրին կոկորդիլոսին հետ կուուելու, և ամմէնքն ալ յաղթըւեցան ու իրեն կերակուր եղան : Աս բանէս հրամանքիդ գութը շարժելով ամմէնուս արզիլեցիք որ մէյմընալ

եղանք ան դազանին վրայ , որպէս զի
չըլլայ թէ նորէն արիւն ըլլայ : Աս ար-
գելքը իմ սրտիս մեծ ցաւ եղաւ . զի-
շեր ցորեկ կըմտածէի ճար մը գտնել
աս դազանը սպաննելու . եղեր է որ
ինչվան զիշերը երազիս մէջն ալ հե-
տը կոուեր եմ . և անանկ որ հե-
տեալ օրը երբոր նոր փորձանք մը
կըլսէի , սիրտս կեղար , ու ես ին-
ծի կըսէի . Արն է մէկ երիտասարդ
ասպետի մը փառքը . ինչ ըրին ան
քաջ մարդիկը որոնց անուանը մեք
ամմէն օր երգերնուս մէջ կը յիշենք .
ինչով հին ատենի մարդիկը չաստուած-
ներու կարգ անցան ու սկսան պաշ-
տըւիլ : Ասան զի իրենց երկիրը դա-
զաններու աւազակներու ձեռքէ խա-
լըսեցին : Իրենց արիւնը թափելը աչ-
ւընին առին , որպէս զի զուրիշները
բռնաւորներու ձեռքէ խալըսեն : Մեր
պարտքը չէ թէ մինակ անհաւատնե-
րուն դէմ կոուիլն է , հապա նաև ամմէն
բանի մէջ օգնել մեր եղբայրներուն :
Մենք մեր կտրձու թիւը մէյմէկ վահանե

պիտի ըլլանք բոլոր խեղճ քրիստոնէից։
Տայց ամէն բանի մէջ ալ խոհեմու
թիւնն ու իմաստութիւնը պիտի առաջ
նորդէ մեզի, ու ժին հետ մէկտեղ խորա-
գիտութիւն ալ պէտք է, մանաւանդ եր-
բոր ասանկ թշնամիի մը դէմ երթալու
ըլլանք նէ : Ասոնք մտածելով սիրտս
վառւեցաւ, ելայ ճամբայ, առանց գիտ-
նալու թէ ո՛ւր կրկենայ աս դազանը. մէ-
կուն մէկալին հարցընելով իմացայ տե-
ղը . դացի տեսայ, ու մտքիս մէջ տը-
պաւորւեցաւ իր մարմնոյն ձևը : Ղառ-
նալէս ետքը հրաման ուղեցի հրա-
մանքէդ որ իմ հայրենիքս երթամ քիչ
մը ատեն հանդչելու . սիրով հրաման
տրւիք : Տուն հասնելուս պէս մէկէն
դացի գտայ վարպետ մարդ մը որ կա-
րենայ ձևացընել շինել տեսած կոկոր-
դիլոսիս նմանը, որուն ձևը դեռ մըտ-
քիս մէջն էր : Շուտ մը սկսանք երկուք-
նիս աշխատիլ, և քիչ ատենի մէջ ահա
դին վիշապ մը շինեցինք : Առաջ ես
պատկերքը քաշեցի, ետքը նմանը շինե-
ցինք : Արի ասիկայ դետնին վրայ ու

սկսայ անոր վրայ վազելով կրթութիւն
ընել՝ զինքը սպաննելու համար: Այրկու
հաւատարիմ որսի շներս հետս առած
հեծայ կտրիճ ձիուս վրայ ու սկսայ
գազանին վրան վազել. նշան կուտայի
շներուն որ յարձրկին գազանին փո-
րուն տակը մտնան. ես ալ ձիուս սան-
ձը թողուցած՝ անոր վրայ կը յար-
ձրկէի: Առջի բերանը ձիս ու շներն
աս ահագին վիշապը տեսնելնուն պէս
սկսան վախնալ. բայց ես նորէն սկը-
սայ կռուիլ: Մէկ ամիսի մը չափ ա-
սանկ փորձ ընելէն ետքը վարժեցան
շներս ու ձիս, ու վիշապը կտոր կտոր
ըրինք: Ան ատենը ելայ մեր տնէն ու
նորէն դարձայ հոս: Հագիւ թէ նա-
ւէն դուրս ելայ, ժողովրդեան խեղ-
ճութիւնը մէկէն առջևս ելաւ. ամմէ-
նուն բերանը ողբ ու լաց, ամմէնքը ախ
վախ կրկանչէին աս գազանիս ձեռքէն:
Արիւնս սկսաւ եփիլ. սիրտս չիղի-
մացաւ ժողովրդեան խեղճութեանը.
միտքս դրի որ ես աս գազանս մէջտե-
ղաց վերցընեմ: Հասկըցուցի միտքս

իմ ձիապաններու , առի շներս , և սկսայ երթալ դէպ 'ի դազանին բոյնը : Չիս ալ կարծես թէ միտքս իմանալով սկսաւ սրտոտ կերպով մը առաջ երթալ :

« Գիտէք հրամանքնիդ ան լեռան վրայի մատուռը , ուր որ Աստուածածնայ գեղեցիկ պատկերք մը կայ : Յիսուս գիրկը և իրեք մոզերուն երկրպագութիւնը քաշած : Արսունւիւրեք ոտք բարձր է աս լեռը , մէկ ծայրը ինչվան ծովեզերքը տարածւած է պատի պէս , տակը խորունկ ու մութ քարանձաւ մը կայ , դուռը խոտերով ու փշերով ծածկած , հոն քաշւած կը սպասէր աս դազանը իրեն որսը գրանելու : Ան ատենը ձիէս վար ինչայ , ասպարեցի ձիապաններու որ ըսպասեն ինձի , ու ես ելայ մատուռը դայի , Յիսուսին ոտքն ինկայ , մեղայ ըսի ու մեղքերուս թողութիւն ուզեցի : Կնձի այնպէս երեցաւ թէ փրկիչը լսեց իմ աղաչանքիս , և խոստացաւ ինձի օգնելու , ես ալ միտքս դրի

Թէ պիտի յաղթեմ. ալ վախ չիմնաց սիրտս, ոտք ելայ, հանեցի թուրըս՝ Աստուծոյ նուիրեցի : Աջայ վար, հեծայ ձին, յանձնեցի զիս նորէն Աստուծոյ, ու սկսայ առաջ երթալ : Հազիւ թէ կտոր մը տեղ գացի, շներս տեսան կոկորդիլոսը՝ խոտին վրայ բերանը բաց պառկած. բայց ոչ անոնք և ոչ ձիս սիրտ ըրին վրան վազելու : Անատեն ես սկսայ ձեռքով ձայնով գրրգրուել զիրենք, մէյմըն ալ սոսկալի կատաղութեամբ մը վազեցին վրան, ես ալ տէգովս սկսայ զարնել զազանին, բայց ինչ օգուտ, տէգս ծալլուեցաւ ծռեցաւ, ու անոր կաշիին բան մը չեղաւ : Չիս խրտեցաւ կատղեցաւ, սկսաւ ետ ետ երթալ, ան միջոցին Աստուած ինծի լոյս տրուաւ, ցաթկեցի վար ձիէն, թուրըս քաշեցի, ելայ գազանին վրան, բոլոր ուժովս սկսայ կոնրկին զարնել, բայց անիկայ պոչովը մէյմը ինծի զարնելուն պէս, զիս գետնին երեսը փռեց, ես ալ միտքս դրի թէ հիմա կտոր կտոր պիտի ըլլամ : Բայց շներս գազանին շարժիլը տեսնելով մէ-

կէն վրան թափեցան ու սկսան կուրծքը խածխըծել, որ անտեղի կաշին կակուղ ու բարակ էր : Մէկէն ոտք ելայ ես, ոչ անոր պոռալուն նայեցայ, և ոչ սոսկալի կատաղութեանը, բոլոր ուժովս խոթեցի թուրըս փորը ու մէկէն դուրս քաշեցի. մէյմընալ զարկի, որ խոշոր վէճք մը բացեցաւ վրան, ու ձիւթի պէս սև արիւնը թևի հաստութեամբ սկսաւ դուրս վազել : Տապըլտրկեցաւ զազանը, ու զիս նորէն գետինը զարկաւ, ես ալ ինքզինքս ան միջոցին կորսընցուցի : Քիչ մը ատենէն խեղքս զլուխս եկաւ, աչքս բացի տեսայ որ ահագին զազանը սատկեր կեցեր է » :

Աս խօսքերուս ատենը բոլոր մտիկ ընողները սկսան զովել, կանչվըռտել ու հարցընել թէ ինչ է անունը աս քաջ ասպետին՝ որ բոլոր կղզիիս ասանկ մեծ բարիք ըրաւ : Մէկալ ասպետներն ալ սկսան աղաչել իրենց գլխաւորին որ մէկ պսակ մը պատրաստէ աս ասպետիս համար :

Մեծաւորը հրամայ որ լռութիւն

ըլլայ . ետքը ծուռ ծուռ երեսը նայե-
լով դարձաւ ըսաւ ասպետին . « Քու
քաջութիւնդ արժանի է գովեստի , որ
դեակ իմ , խօսք չունիմ . քաջութեամբ
պատերազմեցար , ու բոլոր աշխրբքիս
առջև մեծ անուն հանեցիր . բայց զիտ
նաս որ դազան մը սպաննելու համար՝
սրտիդ մէջ ուրիշ դազան մը մեծցուցիր
որ մեռուցած էդ հազար անգամ մեծ է :
Աւահա ատ դազանը որ մարդուն սիր-
տը կըթունաւորէ , ու մեր միաբանու-
թեան կործանմանը պատճառ կըլլայ՝
անհնազանդութիւնն ու խօսք մտիկ
չընելն է : Քրիստոնեայ զինուորը հը-
նազանդութեամբ միայն կըտարբե-
րի անհաւատ զինուորէն : Մենք
Յիսուսի աշակերտ պիտի ըլլանք , որ
ամէն բանի մէջ հնազանդեցաւ իր
երկնաւոր Հօրը , և յանձն տուաւ խաչի
վրայ մեռնիլ՝ մեզի հնազանդութիւն
սորվեցընելու համար . և մեր առջի
պարտքը կամքերնիս կոտրելն է : Ուս-
տի տա բանիս համար , որդի անհնա-
զանդ , կըհրամայեմ քեզի որ հիմա

աս վայրկենիս ելլես երթաս աս սուրբ տեղէս, ու մէյմըն ալ աչքիս չերևնաս, վասն զի ով որ Քրիստոսի լուծը չուզեր վիզը առնել, անիկայ Քրիստոսի խաչին դրօշակին տակը չիկրրնար պատերազմիլ» :

Աս խօսքերէս խեղճ ասպետը երեսին դոյնը նետած՝ գլուխը կախած մեծ յանցաւորի մը պէս մէկդի քաշւեցաւ : Թողովուրդը ձայնը բարձրացուց ու սկսաւ տակն ու վրայ ըլլալ ալէկոծեալ ծովի մը պէս, մէկալ ասպետները տեղերնէն ելան, մեծաւորին չորս դին առած սկսան թողութիւն խնդրել իրենց յանցաւոր եղբօրը համար, բայց մեծաւորը ամենևին մտիկ չըրաւ :

Ասպետը հանեց դրաւ իր զրահն ու զէնքերը դրան առջևը, եկաւ նորէն ամմէնուն կեցիք բարով ըսաւ, թողութիւն ուզեց մեծաւորէն ու ելաւ գնաց :

Վանքին դուռը հասաւ չիհասաւ, մէկէն մեծաւորը ելաւ աթոռէն, վազեց էտեէն, ու սկսաւ կանչել, «Ա՛հ,

եկու գիրկս , եկու իմ սիրելի որդիս ,
ասա հիմա իրաւցընէ մեծ յաղթու-
թիւն ըրիր , վասն զի դուն քեզի յաղ-
թեցիր » : Ա՛ռ աս պսակը որ քու հը-
նազանդութեանդ ու խոնարհութեա-
նըդ վարձքն է , ասկէ վերջը իրաւունք
ունիս պարծենալու իբրև քրիստոնեայ
ասպետ մը , ինծմէ ետքը առջինը դու
ես աս վանքիս մէջ , վասն զի դրած է ,
թէ « Ալ է հնազանդութիւն քան
զզոհ ընտիր » . և « Վ՛ր որ կըխոնար-
հի՛ կըբարձրանայ » :

Ան ատենը ամէնքը ուրախակից ե-
ղան ասպետին աս ըրած նոր ճշմարիտ
յաղթութեանը վրայ , ըսելով թէ ճըշ-
մարիտ քաջ մարդը ան է , որ իր հը-
պարտութեանը ու կամքին կըյաղթէ :

Աս զուրցելով ոտք ելաւ աւագերէ-
ցը . Մարկեղոսին տղաքն ալ շատ
շատ շնորհակալ ըլլալով իրմէ դար-
ձան տեղերնին :

ԵՐՐՈՐԳԻ ԻՐԻԿՈՒՆ

Երախտագէտ տղայ:

ՀԱՐԻԻՐ տարիի չափ կայ որ Ասն
գետին քովերը գեղեցիկ ձորի մը մէջ
կըբնակէր Փեններ անունով բարե-
պաշտ ու աշխատասէր երկրագործ մը՝
ուժը զաւկի տէր: Իր կեանքը առջի
նահապետներուն կեանքին կընմանէր,
ինչու որ միշտ աղօթք կընէր ու կաշխա-
տէր: Աստուած իրեն մեծ հարստու-
թիւն չէր տրւած, տնակ մը ունէր որ
հազիւ իր տնեցոցը կըբաւէր, կտոր մը
երկիր ունէր՝ պէտք եղած բաները ցա-
նելու համար, և պզտի դաշտ մը, ուր
իրեք հատ կով ու վեց հատ այծ կարա-
ծէին. աս էր աս հա բոլոր իր ունեցած
մեծութիւնը: Տայց ինքը անբաւ դանձ
դիպեր էր առաքինութեամբ, և կըջա-
նար իր տղաքն ալ անանկ կըթել բա-

րեսպաշտութեան մէջ . և երբոր կը-
տեսնար որ տղաքը չորս դին առած
կեցեր են առողջ ուրախ ու անմեղ,
աշխարք իրեն կըլլար:

Օր մը իրիկւան դէմ երբոր տուն
կըդառնար, տղաքն ալ հետը մէկտեղ
գործիքները կոնսակնին շալկած, տեսաւ
հինգ տարեկան տղայ մը որ ցանկի
մը քով նստէր կուլար: Հարցուց ի-
րեն Փենններ, « Ի՞նչ բան ունիս հոս
որդեակ »: Տղան առանց պատասխան
տալու կուլար: « Ո՞ւրկէ կուգաս, ծնող-
քդ ո՞ւր են »: Խեղճ տղան կակազե-
լով մէկերկու խօսք զուրցեց, բայց ո-
րոշ բան մը չիկրցաւ հասկըցընել: « Ալ
երթանք մեր տունը, ըսաւ Փենններ, աս
իրիկուն հոն կըմնաս, վաղը առտու
կեւընք կըփնտռենք քու ծնողքդ ու կը-
տանինք կըյանձնենք զքեզ իրենց »: Ան
ատենը երկրագործին մեծ որդին շալ-
կեց աս Վ իչեն անունով տղան, ու բե-
րաւ տուն: Ան իրիկունը մէկալ տղոց
հետ մէկտեղ ուրախութիւն կերաւ խմեց,
ու անուշ քուն մը քաշեց ան գիշերը:

Առաւօտը ելաւ Փենններ , գնաց բոլոր քովի գեղերը հարցուց տղուն ծնողացը վրայ , բան մը չիկրոցաւ իմանալ : Ան ատենը գնաց գեղապետին հասկրցուց տղուն բանը՝ աղաչեց որ ինքը փնտռէ գտնէ խեղճ տղուն ծնողքը . իսկ ինքը յանձն առաւ իր քովը պահել տղան՝ ինչպէս որ հայրը մայրը գտնուին :

Գեղապետը ասդին անդին թուղթ դրեց որ տեղեկանայ , բայց ամենևին գիտցող չիկար : Արբոր ողորմած ծերը իմացաւ թէ ասանկ է բանը , ըսաւ ուրախութեամբ . « Արովհետեւ հայրը կորսրնցուցեր է աս տղան , ես իրեն հայրութիւն կրնեմ ու կրկրթեմ զինքը . թող իմ տղոցս հետ կերակուր ուտէ , ես ալ իմ տղուս սէս կրնայիմ վրան » :

Ա իչենը քանի որ մեծցաւ նէ՝ վրան սքանչելի կատարելութիւններ սկսան երևնալ . բնութիւնը անուշ , բարակաւ միտ և բարեսիրտ տղայ մը եղաւ : Ամ մէնուն կրջանար ծառայութիւն մը ընել , ձեռքէն եկածը սիրով կրնէր . ամ

մէնքը զինքը կըսիրէին, և կըսէին թէ
ասոր ջանքը անշուշտ ան է որ իր ա-
ղէկութեամբը մեզմէ տեսած բարիքը
վճարէ. իր բարեպաշտութիւնը, իր աշ-
խատասիրութիւնը, իր հնազանդու-
թիւնը՝ Փեններին տղոցը բարի օրի-
նակ եղած էր:

Հատ տարիներ անցան ասանկ, և
Վ. իչենը միշտ իր նոր ծնողացը ուրա-
խութեան պատճառ եղաւ: Առջի ան-
գամ հաղորդութիւն առնելուն մեծ ջեր-
մեռանդութիւն ցրցուց, և անկէ ետքը
սկսաւ ալ աղէկ ըլլալ. ջանալով օրէ օր
աղէկ կատարել լսած խրատները:

Քիչ ատենէն ան երկրին մէջ մեծ
չորութիւն ու սով ընկաւ. մայիս ամ-
սէն ինչվան սեպտեմբեր գնաց սովը,
ու բոլոր երկրոցիք մեծ նեղութեան
մէջ ընկան. ծառերը խոտերը սկսան
չորնալ. ցորենները էրեցան խանձե-
ցան. արմախքը չիբուսան, որ երկրա-
գործներուն բոլոր յոյսը անոնց վրայ
է, Ռոն գետն ալ ցամքեցաւ:

Վ. իչենը թէպէտև պզտիկ էր, բայց

կիմանար թէ ասոր ծայրը գէշի պիտի
երթայ : Գիտէր որ Փեններին ու
նեցածը քիչ ատեն կրբաւէր այն
չափ ընտանիքը պահելու, և քանի որ
կրմտածէր թէ ինքն ալ ան պատուա
կան մարդուն ծանրութիւն է, սիրար
կրկրտրտէր : Շատ անգամ կրմրտա
ծէր որ մէկ կերպով մը փախչի տը
նէն, երթայ ուրիշ տեղ մը իր հացը
ճարէ. կամ մէկուն քովը ծառայութիւն
ընէ՝ ստակ վաստրկի, բայց կրվախնար
թէ յանկարծ յոյսը պարաս կրրնայ
ելլալ, և ինքն ալ անօթութենէ կրմեռ
նի : Ընոր համար ալ աղէկ սեպեց որ
իր աղէկ աշխատելովը Փեններին ու
ղորմածութեանը մէկ կերպով մը հա
տուցմունք ընէ :

(Օր մը Սոն գետին քովերը այծե
րը արածելու ատեն, տեսաւ խոշոր
խնձորի մը ծառ՝ որ վրան լեցուն պտուղ
էր, բայց չորութենէն սկսեր էր թոռ
միլ : Գիտեց նայեցաւ հողը, իմացաւ
որ հոգ տարւելու ըլլայ նէ՝ ան ծա
ռը կրրնայ ողջ ըննալ : Այլ գեց եկաւ

տուն , առաւ բահը , գնաց ծառին արմատէն ինչպիսի գետը ճամբայ մը բացաւ որ ջուրը հոն բերէ : Չորս օր չիգնաց՝ աշխատանքը լմրնցուց . ջուրը սկսաւ դալ , ծառին ճիւղերը շտակրւեցան , ու օր օրւան վրայ պտուղները հասան . դաշտն ալ քիչ մը ջրի երես տեսնալով սկսաւ կանանչնալ , որ կրրցան այծերն ու ոչխարներն ալ քիչ մը խոտ գտնել :

Փեններ որ աս բանս ամենեւին չէր գիտէր , շատ զարմացաւ , երբոր տեսաւ իր դաշտին զարդարւիլը . տուն որ դարձաւ նէ՛ հարցուց իր տղոցը թէ ո՞վ ըրաւ աս բանս . երբոր անոնք մենք չենք ըրած ըսին , բանը Ա իչենին մնաց , անիկայ ալ պարզմտու թեամբ պատմեց . « Տեսայ որ ըսաւ՝ ծառը կըչորնայ , խղճացի վրան , ջրի ճամբայ մը բացի քովը որ պտուղները հասնին , ու ասանկով օգնութիւն մը ըրած ըլլամ ձեզի որ այսչափ ծանրութիւն եղերեմ ինչպիսի հիմա » :

Փեններ աս լսածին պէս ելաւ զրկեց

Վիչենը. «Ննչ, ըսաւ իրեն, մեզի ծանրութիւն եղեր ես. չէ, չէ. քանի որ դուն աս տանս մէջ ոտքդ դրիր, Աստուծոյ օրհնենքը մեր տանը վրայէն պակաս չէ. և դիտցիր որ դուն քու աշխատանքներովդ չափէն աւելի փոխարէնը ըրիր մեր պզտի բարերարութեանը. թող որ հաւատքնիս ալ մեզի կըսորվեցընէ՝ թէ որբերը նայիլը, աղքատներուն ողորմիլը՝ մեր պարտքն է : Աւստի դուն չէ թէ միայն մեզի ծանրութիւն չես, հապա նաև մենք պարտական ենք քեզի ուրիշ շատ բարիքներ ալ ընելու» : Վիչեն աս խօսքերուս վրայ արցունքը սրբեց, և ան օրէն վերջը աւելի ամմէնուն սիրելի եղաւ :

Վերջապէս աշունքը հասաւ, բայց ինչ օգուտ. ան տարին գրեթէ ամենեւին բերք չիբերաւ, և ցորենը քիչ ըլլալուն՝ ամմէնքը սկսան յուսահատիլ : Ննատեն Վիչենը ելաւ չորս դին պըտըտեցաւ որ մէկէն մէկալէն ողորմութիւն ուզէ Փեններին տանը հա-

Համար : Ամէն իրիկուն որ տուն կը
դառնար , հետը բան մը կը բերէր , ու
խեղճերը կը մխիթարէր :

()ը մը անտառի մը մէջէն անցնե-
լու ատենը հրացանի ձայներ լսեց . ի-
մացաւ որ որսորդները նապաստակ կը
բռնեն . քիչ մը ատեն կանկ առաւ կե-
ցաւ , տեսաւ որ դիմացը նապաս-
տակ մը գետինն ընկած կը տապալտրի .
վազեց վրան , բռնեց առաւ : Մարդ չի-
կար որ իմանար , ուստի ուզենար նէ՛
կըրնար առնել տանիլ . « Քայց ա-
սանկ բան ընել չըլլար , ըսաւ ինքն ի-
րեն , աս նապաստակը իմն չէ , պէտք
է որ առնեմ տանիմ զարնողին տամ .
լաւ է արքատ ըլլալ քան թէ գող » : Աս
մտքով առաւ նապաստակը գնաց որ-
սորդներուն քովը :

Հասնելուն պէս տեսաւ ազնուական
պարոն մը կրակին քովը նստած , ու
չորս դին ծառաները հազւած զարգար-
ւած՝ բոլորն ալ կերակուր պատրաս-
տելու հետ են : Ա իչենը խոնարհու-
թեամբ մը գնաց բարե տըլաւ պա-

րոնին, ու գտած նապաստակը ցուցը-
նելով, « Ահա, ըսաւ, ասիկայ ճամ-
բուն վրայ ընկած գտայ կիսամեռ,
տեսայ որ շները ան կողմը չեն իգար,
ես առի հրամանոցդ բերի որ չըլլայ
թէ կորսըի » :

Օարմացաւ պարոնը, ու ժպտելով
մը ըսաւ իրեն. « Հատ ապրիս, որ-
դեակ, դուն կերևնայ թէ աղէկ տը-
ղայ մըն ես, ինչ է քու անունըդ. հօրդ
անունը ինչ է :

— Իմ անունս Ա իչեն է, բայց ծը-
նողք չունիմ. ես Փեններին տունը կը
կենամ, որ զիս իր քովը առաւ. թէ-
պէտ ինքն ալ ութը զաւկի տէր է, ու
չատ հարուստ մը չէ : Աս հիմա քաղ-
քէ քաղաք կըսըտըտիմ որ քիչ մը
ապրուստ կամ կտոր մը ստակ գըտ-
նեմ իրեն համար, վասն զի անիրա-
ւութիւն ըրած կըլլամ խեղճ մարդուն
թէ որ ես ալ իրեն ծանրութիւն ըլլամ :

— Աս քու խօսքերովդ զիս գութ կը
չարժես որդեակ, թէ որ զուրցածներդ
իրաւ են նէ, դու արժանի ես որ ու-

ըիշները հող տանին վրադ, եկու նրս, տէ կրակին քովը, քիչ մը խօսինք ինչ վան կերակուրին ատենը, ետքը քեզի քիչ մը բան կուտամ որ տանիս քու բարերարներուդ » : Աստաւ Ա իշենը կը ըրակին քովը, պարոնն ալ ասդիէն անդիէն շատ բաներ հարցուց փորձելու համար թէ ըսածները արդեօք իրաւ են թէ չէ, տեսաւ որ տղուն պարզ սրտութեանն ու բարեմտութեանը խօսք չիկայ :

Ան միջոցին բոլոր անտառը սկսաւ խօսիլ փողերու ձայնէն, շներուն հաջելէն, ու ետէ ետէ չորս հինգ կըտրիճ երիտասարդներ հասան ձիերով, բերին ցրցուցին պարոնին իրենց բռնած որսերը . անիկայ ալ Ա իշենին բռնածը ցրցուց, ու պատմեց թէ ինչ պէս բռներ է : Շատ զարմացան անոնք ալ ու գովեցին անոր բարեսրտութիւնը : Աերակուրէն ետէ լեցուցին կողովի մը մէջ հաց, կերակուր, երկու աման ալ դինի, ձեռքը տըին որ տուն տանի : Շատ շնորհակալ եղաւ

բարեբախտ տղան , առաւ բաները , սկսաւ երթալ : Հազիւ թէ քիչ մը հեռացեր ու անտառը մտեր էր , ահա դին վայրի խող մը վազելով անցաւ դիմացէն : Տղան վախէն սկսաւ կանչլըռտել . որսորդները մէկէն վրայ հասան ու խողին ետեւէն սկսան իյնալ : Անցաւ Ա իչենը որ տեսնէ թէ ծայրը ուր պիտի երթայ : Առդին չորս դին առին շները , ան ալ կատղած սկսաւ ետ դանալ ու նորէն տղուն քովէն անցնիլ : Որսորդները մէկ երկու հրացան պարպեցին . բայց մեղք որ . գնտակին մէկը եկաւ խեղճ տղուն ոտքը զարկաւ , տղան մարեցաւ դետինն ընկաւ , ու արիւնը ջուրի պէս ըսկսաւ վազել : Աղէկ որ որսորդներուն մէկը տեսաւ , վազեց եկաւ օգնելու . բայց Ա իչենն ինքզինքը կորսընցուցեր էր : Որսորդը գրկեց տղան բերաւ պարոնին ու հոն կրակին քովը դրաւ :

Հատ տրոմեցաւ պարոնը . մէկէն կանչել տըւաւ որսորդները , կապեցին տղուն վէրքը ու առին հետերնին՝ դար-

ձան պարոնին տունը, որ բերդի մը մէջ էր : Շուտ մը վերաբուծ մը կանչեցին որ գնտակը հանեց մէջէն, ու առանց վտանգի վերքը ըռնացուց :

Աս միջոցիս պարոնին միտքը դալով Վիչենին զուրցածները, շուտով ծառաներէն մէկը ձիով խրկեց Փեննելին տունն որ երթայ տեղեկանայ : Մտան գնաց իմացաւ որ տղուն պատմածները բոլոր իրաւ են . հետը առաւ Փեններն ալ, առաջուց հասկրցնելով իրեն Վիչենին գլխուն եկածը, ու դարձաւ տուն : Մեծ ցաւ եղաւ Փեններին ու իր ընտանիքը երբոր լսեցին աս բաներս, կսկիծներնէն սկսան լալ : Բերդը հասնելուն պէս մէկէն Վիչենին դացին, Փենները մէկէն ճանչցաւ . տղան ալ ձեռքին երկնցուց ու ըսաւ իրեն . « Ի՞նչ պէս դժբաղդ եմ եղեր, գլխուս առանկ բան մը եկաւ, որ երկայն ատեն անկողնէս չիկարենամ պիտի ելլել որ քիչ մը օգնութիւն ընէի ձեզի » : Աս խօսքէս բոլոր կեցողներուն սիրտը

ելաւ : Պարոնը իր ծառայէն ամմէն
բան իմացած ըլլալով, հրամայ որ Փեն-
ներին ընտանեացը կարօտութիւնը հո-
գացւի, անոր երկու տղոց հոգն ալ իր
վրայ բռաւ, ու խրկեց Քենեգիկտեանց
վանքը որ կրթըին : Անկէ ետքը ամ-
մէն շաբաթ կառք մը լեցուցած ամմէն
բարիքով կրխրկէր Փեններին տունը :

Իրեք շաբաթէն վերջը տղան ըռնա-
ցաւ, և ուզեց դառնալ Փեններին քովը .
բայց պարոնը իր հիւանդութեան ա-
տենն ըրած համբերութիւնը և բա-
րի սիրտը տեսնելով թող չխտրւաւ .
և տնեցիք ամմէնքը կուզէին որ հոն
մնայ :

Պարոնը վարպետ մը բռնեց Ալիշե-
նին, անիկայ ալ շատ խելացի ըլլալուն՝
անանկ առաջ գնաց որ ամմէնքը զար-
մացան վրան : Ալիշատենւան մէջ (Թը-
ւարանութիւն, պատմութիւն, երկրա-
չափութիւն, քերականութիւն, երկ-
րագործութիւն, սորվեցաւ : Բայց գի-
տութիւնները ամենևին արգելք մը
չեղան զինքը բարեպաշտութենէն ետ

ձրգելու , մանաւանդ թէ աւելցուցին : Աղէկ հասկըցեր էր որ գիտութիւնը առանց առաքինութեան շատ անգամ անօգուտ է , ու վտանգաւոր ծանրութիւն մըն է . և թէ ալ աղէկ է քանի մը բան չի գիտնալ ու բարեպաշտութեան մէջ մնալ , քան թէ ամ մէն բան սորվիլ ուզելով՝ հոգին առաքինութենէ պաղեցընել :

Երեք տարւան մէջ Վ իչէն ուսմունքը լմրնցուց : Ան ատեն պարոնն անոր յարմարութեանը վրայ վստահանալով , ունեցած երկիրներուն մէկ մեծ կտորը անոր ձեռքը տրւաւ որ երթայ հոն իր ուզածին պէս դիտցածին պէս բանեցընել տայ :

Վ իչէն որ ամենեւին մտքէն չէր հանէր Փեննեբրին ընտանիքը , իր քովը կանչեց զանոնք , ու սկսաւ երկիրները բանեցընել : Աոր անոր հնարքներ գրտաւ՝ երկրագործութեան աշխատանքը դիւրացընելու , երկիրը պարարտացընելու , և ինչ փորձ որ ըրաւ նէ՝ ամ մէնքն ալ յաջողեցան : Աւ ան տեղն որ

ինչևան ան օրը մէկ անպիտան հողմը
կրկարծըւէր, սկսաւ ամմէնէն աղէկ
բերք բերել: Քիչ ատենուան մէջ ան
երկիրը կտոր մը տեղ չիմնաց որ օդ.
տակար բաներ չիբուսցընէ. մէկ խօս.
քով, անասլատ դարձած հողը զուար.
ճալի պարտէզ մը դարձաւ:

Վ իչեն տեսներով թէ իր աշխատան.
քը պարապ չերթալէն վերջը, իրեն
վաստակ ալ կրբերէ, սկսաւ ուրախա.
նալ: Փեններին ընտանեացը հետ
վաստրկածները կըվայելէր. և աւելի
անոր կուրախանար, որ իր բարերա.
րին փոխարէն մը կըցաւ ընել: Փեն.
ներին տնակը ու երկիրն ալ հաւատա.
րիմ երկրագործի մը ձեռքը տըւին որ
պզտի եկամուտ մը եղաւ իրեն:

Պարոնը տեսներով Վ իչենին ըրած.
ները, զովեց զինքը, քաջալերեց,
և ուրիշ երկիրներ ալ տըւաւ: Պեղա.
ցի տղան խոհեմութեամբ ամմէն բան
կարգի դրաւ, ու պարոնին եկամուտը
խիստ շատցուց: Պարոնն ալ ուզելով
Վ իչենին ու Փեններին փոխարէն մը

ընել իրենց աշխատանացը համար ,
կիրակի օր մը փառաւոր կերակուր մը
տըւաւ անոնց լեռան մը վրայ : Այուխը
ինքը նստաւ , աջ դին Փենները առաւ ,
ձախ դին Ա իչենը , ետեւէն մէկալ տը-
ղաքը կարգով : Աեղանին ատենը
Ա իչեն ոտք ելաւ . ձեռքը դաւաթ մը
դինի առած՝ շատ շնորհակալութիւն
ու աղէկ աղէկ բարեմաղթութիւն-
ներ քրաւ պարոնին կենացը համար .
պարոնն ալ ուրախութենէն սկսաւ լալ ,
ու քիչ մը լուռ կենալէն ետքը՝ ձեռ-
քը ծոցը խոթեց , խել մը թղթեր հա-
նեց Ա իչենին տըւաւ որ բարձր ձայ-
նով կարգայ : Ա իչենը սկսաւ կարգալ ,
մէջի գրածն աս էր , թէ « Աս վկաներով
բոլոր ունեցած երկիրներս Ա իչենին
ու Փեններին կուտամ , և իրենցմէ միայն
տասանորդի պէս քիչ մը բան կուզեմ
տարին » : Այլ կրնայ պատմել անոնց
ուրախութիւնը՝ պարոնին աս քրած ա-
ռատաձեռնութեանը վրայ : Ամմէկը
մէկէն ոտքը ինկան , սկսան շնորհա-
կալ ըլլալ ու ձեռքը պագնել : Պարո-

նը կուզէր արդիլել անոնց շնորհակա-
լութիւնը, բայց անկարելի եղաւ . և
իր աս գործքովը սուրբ գրքին խօսքը
իրաւ հանեց ու հասկըցաւ, թէ « Աւ-
լաւ է տալը՝ քան թէ առնուլը » :

Ան օրը բոլոր ուրախութեամբ ան-
ցուցին : Մէկը ուրիշներուն բարիքը
նելով կը զուարճանար, մէկալո՞նք ալ
իրենց երախտադիտութիւնը ցուցնե-
լով :

Անկէ վերջը փեններին տունը հան-
դիստ ու երջանիկ ապրեցաւ :

Արբոր ալ փեններ ծերացաւ ու
չէր կրնար աշխատիլ, Վ իչենը ըսաւ
որ հանդիստ իր տեղը նստի . և ինքը
իր որդիական գութը ու սէրը կը ցու-
ցընէր վրան :

Փենները միշտ աս խօսքըս կըսէր
Վ իչենին . « Մենք քեզի շատ պէտք
է շնորհակալ ըլլանք . դուն չըլլայիր
նէ՛ մենք աղքատութեան մէջ կը խորհ-
դըւէինք » : Ինքն ալ պատասխան կու-
տար . « Չէ, անանկ չէ . ասոնք բոլոր
ձեր ողորմածութեանը պատուին է .

անով է որ Աստուած օրհնեց զձեզ
և վարձատրեց . որովհետև ինծի պէս
խեղճ տղու մը չէ թէ միայն մեծ դուրս
ցրցուցիք, հասպա նաև ձեր բերնին հա-
ցը կտրելով ինծի կերցուցիք . ասանկ
բարեգործութիւնը ոչ երբէք կը կոր-
սուի » :

Փեններ բոլոր կենացը մէջ չիմո-
ցաւ թէ ինքն ալ ատենով աղքատ էր .
ուստի աղքատներուն օգնելու մեծ
փոյթ ունէր : Աղքատ չէր եղած որ ի-
րեն դար ու պարաս ձեռքով դառնար :
Իր ծերութեան ատենը սրտին մեծ
ուրախութիւնը աս էր որ կը տեսնար,
թէ իր տղաքն ալ իր բռնած ճամբան
կը բռնեն, և մեծ բանը սրն է (որ դրժ-
ւար կը դըռանը ի մեծ տներու մէջ,)
իր տղոցը սէրն ու միաբանութիւնը
աչքով տեսաւ և ուրախ սրտով օրհ-
նելով զիրենք, ու փառք տալով Աստու-
ծոյ նախախնամութեանը՝ հոգին ա-
ւանդեց :

Ասով քահանան խօսքը վերջացուց :
Պարոն Մարկեղոսին ալ սիրտը ելած՝

դարձաւ ապսպրրեց իր տղոցը որ չի մոռնան աս սիրուն պատմութիւնը :
Ըն ատենը քահանան դարձաւ ըսաւ .
« Ես ալ կըսեմ՝ ձեզի ան խօսքն որ Քրիստոս ըսաւ Փարիսեցւոց՝ Սամարացիին պատմութիւնը պատմելէն վերջը . « Գացէք դուք ալ անոր պէս ըրէք » : « Հապա՛ , ինչո՞ւ չէ , ըսին տըղաքը , մենք ալ ձեռքերնէս եկածին չափ դժած պիտի ըլլանք ու բարեգործութիւն պիտի ընենք » , և ուրախ զուարթ դարձան տըներնին :



ՉՈՐՐՈՐԳ ԻՐԻԿՈՒՆ

Բարեգործութիւն :

ՊԵԼՃԻԱՅԻ քաղաքներուն մէկուն
մէջ Աւրիք անունով հարուստ երկը-
թի վաճառական մը կար . ասիկայ եր-
կու աղջիկ զաւակ ունէր . մէկուն ա-
նունը Կատարինէ , մէկալինը Արսուլա :
Եր բարեպաշտ , առաքինի ու խելացի
ընկերը ատենէ դուրս վախճանած ը-
լալով , բարեպաշտ Աւրիքը բոլոր իր
սէրը և ջանքը դարձուց իր զաւկրնե-
րը աղէկ կրթելու . ուստի ետեւէ եղաւ ,
գտաւ իրենց համար մէկ աղէկ խե-
լացի վարժապետ մը , որ զիրենք կրը-
թէ . զաւկրներն ալ ջանացին ուրա-
խացրնել իրենց հայրը՝ հնազանդ ը-
լալով իրենց վարժապետին :

Քանի որ տարիքնին կառնէին՝ կա-
մաց կամաց սկսան փայլիլ իրենց ա-
ռաքինութիւնները . որոնց զխաւորն

էր դուժ , և ուրիշին բարիք ընել :

Դեռ պղտիկ ալ ըլլալով շատ անգամ չէ թէ միայն իրենց նախաձաշիկէն ու սեղանէն բաժին կը հանէին աղքատներուն , հասպա էն սիրած բաներնին ալ իրենց բերնէն կը կըտարէին , ուրիշ աղքատներու կուտային :

Ասոնք քաղքէն քիչ մը հեռու գեղեցիկ տուն մը ունէին . ուստի իրենց վարպետին հետ մէյտեղ շատ անգամ հոն կերթային օգ փոխելու : Աս պղտիկ ճամբորդութիւնը իրենց առիթ կը ըլլար՝ մէկուն մէկալին շատ ողորմութիւններ ընելու . կընայէին որ միշտ հետերնին բան առնեն գեղացւոց տանին . գեղացիներն ալ մեծ ուրախութիւն կուսենային երբոր իրենք հոն կերթային : Երբեմն լաթ կը բաժնէին անոնց , երբեմն իրենց հիւսած գուրպաները : Հայրերնին ալ աս բաներս լսելով աւելի կուրախանար , ու երբեմն երբեմն մէյմէկ քիչ ստակ ալ կուտար որ ուղածնուն պէս ողորմութիւն ընեն :

Անգամ մը Ալլըիք իր ճամբորդու

Թենէն դարձած ըլլալով, շատ նեղա-
ցաւ իր պարտիզպանին, ասիկայ եօթը
զաւկի տէր էր, բայց ինքզինքը խմելու
տրւած, թէ պարտէզը և թէ իր տու-
նը տեղը երեսի վրայ թողուցած, կեր-
թար մէկ քանի իրեն պէս գինեմու-
մարդիկներու հետ մէյտեղ ունեցածը
չունեցածը կրմսխէր : Աւրիք ըստառ-
նացաւ ասոր, թէ որ ճամբագ չիփոխես՝
քեզ կը հանեմ քովէս, ըսաւ. բայց աս-
նիկայ մէկ քանի օրէն ետքը նորէն
սկսաւ իր առջի ջուրը բռնել, այնչափ
որ հանեց զինքը իր քովէն :

Ատարինէն և Արսողան շատ կըս-
կըծացին աս քանիս վրայ, բայց ինչ
շահ՝ իրենց ձեռքէն բան չէր իզար :
Աստի հոգ տարին որ ձեռքերնէն
եկած բարեքը ընեն պարտիզպանին
զաւկրներուն :

Պարտիզպանը ստակ չի գտնելով
խմելէն դադրեցաւ, բայց վաստակ մը
չունենալուն համար գնաց մէկ պղտի
տնակ մը գտաւ, ուր խեղճ տղաքը չոր
խոտի վրայ կը պառկէին : Աս նեղու-

Թիւներէս պարտիզպանին կինն ալ Տիւ
ւանդացաւ . և Աատարինէն ու Արսու
լան անդադար մէյմէկ քիչ բան կրկնը
կէին իրենց . բայց ողորմելի կնկանը
Տիւանդութիւնը երթալով ծանրացաւ
տղաքն ալ երեսի վրայ մնացած կու
լային կողբային :

Պարոն Աւրիքը որ ամիսներով ա
ռաջ Փարիզ դացեր էր , աս միջոցիս
դարձաւ եկաւ տուն , և իր զաւկընե
րուն մէյմէկ ընծայ բերաւ . մէկուն
փառաւոր մարզըրտէ վզնոց մը , մէ
կալին ալ ազնիւ բարակ Նահուի շալ :
Հայրերնին միտքը դրեր էր որ աս
ընծաներով իր զաւկըներուն ուրա
խութիւնը տասնպատիկ աւելցընէ .
ասոր ներհակ՝ անոնք մէկ մեծ ուրա
խութիւն մը չիցրցուցին : Շատ զար
մացաւ հայրերնին աս բանիս վրայ , և
ուզեց պատճառը իմանալ : Ըղջիկնե
րը քանի որ ուզեցին ծածկել , հայրեր
նին սկսաւ ալ աւելի ետեւէ իյնալ :
Ըն ատենը Աատարինէն ըսաւ . « Ես ,
սիրելի հայր իմ , աւելի կրփափաքէի

որ վզնոցիս համար տրւած ստակդ ինձի տայիր . ինչու որ իմ քովս ասանկ զարդեր լեցուն է » : Աոյնպէս ալ ես , ըսաւ Արսուլան , սիրով կուտամ հրամանքիդ շալս , թէ որ ինձի անոր զինք տալու ըլլաս » :

Ով կրնայ պատմել ասոնց հօրը զարմանքը ապշութիւնը՝ իր զակրնեփուն ասանկ խնդիրքին վրայ : Քիչ մը ատեն մտածելէն ետքը դարձաւ ըսաւ իրենց . « Հատ կըզարմանամ ձեր աս բաներուս չիհաւնելուն , որ ես ամէն կերպով ջանացի ձեզի էն աղէկ բաները բերել . չէի կարծէր թէ դուք ստակը զարդէն աւելի կըսիրէք : Բայց անտարակոյս ասոր տակը բան մը կայ . մի պահէք ինծմէ . հասկընամ ինչ բան է , որ ճարը գտնանք » :

Ըն ատենը վազեց Աատարինէն հօրը ձեռքը պազաւ ու ըսաւ . « Օջար գարանքի տեղ ստակ ուզելնուս պատճառը աս է , որ ուզած բաներնուս կարենանք բանեցընել » :

« Եյ ինչ բանի պիտի բանեցընէք
20 . ԻՐԻԿՈՒՆ 1 6

նէ ըսէք նայիմ , ինչ է ուզածնիդ :

—Մենք մտքերնիս գրեր էինք որ ան ստակը մեր պարտիզպանին տանք, որուն կինը հիւանդ է ու տղաքը անօթութենէ մահւան դուռը հասեր են: Ասկէ 'ի զաս իրենց տանը վարձքը վճարելու օրերն ալ հասեր են , ու թէ որ տալու չըլլան՝ պէտք է որ տընէն ելեն » :

Պարոն Աւրիքը զարմանքէն շիգի մացաւ , գրկեց զաւկըները պագաւ , հանեց քսակը , պարպեց առջևնին , և սրտին ուրախութենէն լալով « Արնեկ ինձի որ ասանկ բարեսիրտ ու բարբար զաւկըներու տէր եղեր եմ, ըսաւ: Ահա հիմակու հիմա վրաս ունեցածըս աս է , աս ստակները տարէք իրենց , խօսք կուտամ ես ասկէց ետքը զիրենք հոգալու , բայց աս դաշինքով որ պարտիզպանը իր մոլութիւններէն ետ կենայ» : Անոնք մէկէն ստակը առնելուն պէս վազեցին գացին պարտիզպանին տունը , « Աւրախ կեցիր , ուրախ կեցիր , կանչեցին հիւանդ կնո-

ջը , ահա մեր հայրը ձեր վրայ գլծալուով խրկեց ձեզի հիմակու հիմա ասչափ ստակ . և խոստացաւ որ ասկէց ետքը ձեզ ինքը պիտի հոգայ . բայց աս դաշինքով որ էրիկդ զինի խմելէն ետ կենայ » :

Աւ ձեզի կըթողում մտածել թէ ինչ ուրախութիւն ունեցաւ խեղճ կինը՝ երբոր անկողնին վրայ ութը ոսկին մէկէն տեսաւ : Հնորհակալութիւններ ընելուն չիմնաց , անոնք ելան վազեցին դարձան տուն . և հայրերնին դեռ սանդուխէն նոր վար ինջեր էր , երբոր տեսաւ որ ուրախութեամբ իր տղաքը կուգան . զարմացաւ թէ ինչ շուտ դարձան . « Մտածմունքս սարտիզարանին վրայ է ըսաւ , մէկ աղէկ տեղ մը կուզեմ գտնել իրեն . բայց կը վախնամ որ մէկէն ՚ի մէկ իր հանգիստը գտնալու ըլլայ նէ , նորէն իր ախտը ձեռք կառնէ : Ինծի կերեւնայ թէ իր բարեկամներէն հեռացընելու է զինքը ու թող չիտալու է որ սլարասլ կենայ . ասանկով կընանք զինքը կըթել : Աս

կըխաւրեմ զինքը մեր անտառը, որ հոն
երթայ աշխատի, ուր որ ոչ գինետուն
կայ և ոչ բարեկամ: Չեզի ինչպէս
կերենայ:

— Հատ աղէկ մտածեր ես, ըսին.
ասկէ աղէկ ճար չէինք կրնար գտնել:»:

Այոյն օրը նորէն գացին հիւանդին
ու պատմեցին իրենց հօրը ընելիքը:
Խեղճ կինը որ ամենևին չէր յուսար
ասանկ երջանկութեան հասնելու, ձեռ-
ւրներն երկինքը վերցուց, շնորհակալ
եղաւ Աստուծոյ որ իր նախախնամու-
թիւնը իրենց վրայէն պակաս չըրաւ:

Ատարինէն ու Արսողան խել մը
ատեն հոն կեցան, սենեակը մաքրե-
ցին, տղոցը վրանին գլուխնին շտկե-
ցին. կտոր մը կերակուր եփեցին ի-
րենց, մսիթարեցին զիրենք, ու դար-
ձան տուն:

Անոջը հոգերն ալ քիչ մը պակսելուն՝
սկսաւ աղէկնալ. ու օր օրուան վրայ
անանկ առողջացաւ, որ սկսաւ իր էր-
կանը հետ աշխատիլ, ապրուստ գտնել:

Իսկ պարոն Աւրիքը ըսածն ըրաւ.

դրաւ զինքը մէկ պզտի երկրի մը վա-
րայ . բայց տալէն առաջ ըսաւ իրեն
բոլոր ընտանեացը առջևը . « Գիտես
բարեկամ , թէ ինչ խեղճ վիճակի մէջ
ընկար դունքու ատ աստովդ . ինչւան
աս օրս պրեթէ քու վաստակդ կոր-
սընցուցիր փուճ գուարճութեան մը
համար , որ խելացի մարդու գործք չէ :
Ինքզինքդ խմելու տալով ակրեցիր
քու առողջութիւնդ , ու քու ընտանիքդ
անօթութենէ մեռնելու վտանգի մէջ
ձգեցիր : Ամէնուն առջևը անունդ
կոտրեցիր , ամէնուն աչքէն ելար .
քու տղոցդ ու գեղացոց տըւած գայ-
թակղութիւններովդ զԱստուած բար-
կացուցիր : Քեզ տեսնամ ուրեմն ասկէ
ետքը ինչպէս պիտի փոխես վարքդ , որ
ամէնքը տեսնելով շինւին քու վրագ :
Մի վախնար , մեղաց առիթներէն հե-
ռանալով և աղէկութեան ետևէ ըլլա-
լովդ , ան խենթ բաներուն տեղը՝ ուրիշ
միսթարութիւներ ու գուարճութիւներ
կունենաս : Պիտի գտնես զԱստուած
ու իր շնորհքը , որ քեզի կօզնեն ,

ուծ կուտան խօսք տրւած բաներդ
կատարելու, իսկ թէ որ քու ախտե-
րուդ ծառայ մնայիր՝ զՄատուած քե-
զի օգնական չէիր կրնար ունենալ :
Ջաննա՛, աշխատէ՛, ասկէ ետև նոր
մարդ եղիր, ան ատենը կըլուսամ որ
ճշմարիտ երջանկութիւնը կըգտնես և
մահը զքեզ չիկրնար վախցընել : Ճշ-
մարիտ քրիստոնեան ամենեին չիվախ-
նար Մատուծոյ դիմացը ելլելու, մե-
ղաւորն է որ կըվախնայ, վասն զի
իր բրածներուն վրայ համար պիտի
տայ » :

Մս խօսքերէս պարտիզպանին սիր-
տը եղաւ, ու խոստացաւ որ անկէ վեր-
ջը ինքզինքը շտկէ : Երաւցընէ խօսքն
ալ պահեց, ու փոխւեցաւ նոր մարդ
եղաւ : Բարեպաշտութիւնն որ գրե-
թէ մոռցեր էր, իրեն մէկ հատիկ մխի-
թարութիւն եղաւ, և իր ախտերը կոտ-
րելով անանկ առաքինի եղաւ որ ամ-
մէնքը իրմէ բարի օրինակ կառնէին :

Եր տղաքն ալ մեծցան, կատարեալ
քրիստոնէի վարք ունեցան : Ատաա-

ըինէն ու Արստղան շատ անգամ կեր-
թային անոնց . որ օր օրւան վրայ ա-
ղէկնալով իրենց մեծ ուրախութեան
պատճառ եղան :

Պարտիզպանն ալ միշտ կըսէր ի-
րենց . « Չեմ գիտեր ինչպէս շնորհա-
կալ ըլլամ ձեզի որ ինծի ասանկ մեծ
աղէկութեան պատճառ եղաք » :

Ահա ասանկ օրհնեց Աստուած ան
անմեղ ու գթած աղջիկները , որ իրենց
ըրած մէկ բարեգործութիւնը պատ-
ճառ եղաւ մէկ ամբողջ տան մը եր-
ջանկութեան :



Յ Ա Ն Կ Գ Լ Խ Ո Յ



ԱՌՁԻ ԻՐԻԿՈՒՆ , Աստուծոյ վախը , և մարդկային նկատմունքը	7
ԵՐԿՐՈՐԴ ԻՐԻԿՈՒՆ , Հնազանդութի .	36
ԵՐՐՈՐԴ ԻՐԻԿՈՒՆ , Երախտագէտ տը- ղայ	54
ՉՈՐՐՈՐԴ ԻՐԻԿՈՒՆ , Բարեգործու- թիւն	73



50

for

for

